# ԳԼՈԲՈՒՍ

## ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

4(8)

ԵՐԵՎԱՆ

2009

# ԳԼՈԲՈՒՍ

## ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թիվ 4 (8), 2009

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
*Գագիկ Հարությունյան*

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ
*Աննա Ժամակոչյան*
*Ռուբեն Մելքոնյան*

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
*Էդուարդ Դանիելյան*
*Լուսինե Բաղրամյան*
*(պատասխանատու քարտուղար)*
*Խոնարհիկ Քարաուղլանյան*
*(պատասխանատու խմբագիր)*
*Սնակ Սարուխանյան*
*Տիգրան Հարությունյան*

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇԱՐՎԱԾՔ
*Դիանա Գալստյան*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Գագիկ Հարությունյան*
Ապագայի ձևավորումը ..... 3

*Էռնեստ Գրիգորյան*
Ռեֆլեքսայնությունը՝ որպես տեղեկատվական կառավարման սկզբունք ..... 8

*Սամվել Մարտիրոսյան*
Իրան. այլընտրանքային հաղորդակցություններ ..... 16

*Խաչատուր Դադայան*
Ադրբեջանական ՀԿ-ները Ռուսաստանում... 24

*Արտակ Գրիգորյան*
Իսրայելի արտաքին քաղաքականության գերակա ուղղությունները. Հարավային Կովկաս և Կենտրոնական Ասիա.....28

*Հարություն Մարության*
Իսրայելի մրցունակությունը և գիտության դերը .....42

# ԱՊԱԳԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

## *Գագիկ Հարությունյան*

Ապագայի կանխատեսումը մշտապես եղել է մարդկությանը հուզող խնդիրներից մեկը։ Մեզ հայտնի գրեթե բոլոր հասարակություններում գուշակներն առանձնահատուկ կարգավիճակ են ունեցել և մեծ հարգանք վայելել։ Դեռևս մ.թ.ա. 2-րդ հազարամյակում հունական Դելփիի քաղաքում Ապոլոնի տաճարի քրմուհիներն անտիկ աշխարհին հայտնի էին գուշակություններ կատարելու կարողությամբ, և որևէ նախաձեռնություն սկսելուց առաջ թագավորներն ու զորավարները գրեթե պարտադիր այցելում էին այդ տաճար։ «Դելփյան կանխատեսումների» մի մասը պահպանվել է և դրանց՝ արդեն մեր օրերում կատարված վերլուծությունից հետևում է, որ գուշակությունների զգալի մասը՝ 41%-ը, հայտնի իրողությունների ամրագրում էր ներկայացնում, 32%-ը՝ հրահանգ-հրաման (այսինքն՝ կատարիր այս կամ այն քայլը), գործողություններ արգելող ցուցումները կազմել են 22%, ապագայի սխալ գուշակությունները՝ 3%, իսկ իրականացել է կանխատեսումների ընդամենը 2%-ը։ Ինչպես տեսնում ենք, կանխատեսմանը կարող է հավակնել պատասխանների ընդամենը 5%-ը, որոնցից իրականացել է 50%-ից էլ պակաս մասը։

Չնայած կանխատեսումների նման անմխիթար արդյունքներին, գուշակներին դիմելու ավանդույթը պահպանվել է մինչև մեր օրերը։ Այսօր էլ մեծ թվով գործիչներ, ձեռներեցներ և հասարակ մահկանացուներ կանոնավոր այցելում են զանազան բախտագուշակների ու, զգալի թեթևացնելով իրենց քսակները, փորձում են հասկանալ, թե ինչ է իրենց սպասում մոտ կամ հեռու ապագայում։ Համաձայն փորձագետների, այս երևույթը պայմանավորված է նրանով, որ մարդկանց մի մասը հակված է բախտագուշակների մշուշոտ ձևակերպումներում տեսնել սեփական կյանքի իրական փաստերը և զարգացումները, ինչն էլ ստիպում է նրանց հավատալ զանազան «կանխատեսումների»։ Մասնագիտական գրականությունում նման էֆեկտները կրում են այդ երևույթները հայտնաբերած և ուսումնասիրած հոգեբաններ Բառնումի, Ռոզենտալի և Հոտորնի անունները։

### *«Դելփի» տեխնոլոգիան*

Նորագույն շրջանում ապագայի կանխատեսումներն ընդունեցին ավելի համակարգված բնույթ, իսկ ոլորտը ստացավ գիտական անվանում՝ ֆուտուրոլոգիա: Սկզբնական շրջանում ֆուտուրոլոգները գլխավորապես գրողներ և փիլիսոփաներ էին, որոնց կանխատեսումները սեփական ինտուիցիայի և երևակայության արգասիքն էին: Պետք է ընդունել, որ նման կանխատեսումների մի մասը ոչ միայն լայնացրեց ժամանակակիցների մտահորիզոնը, այլև իրագործվեց ապագայում: Սակայն ֆուտուրոլոգիան վերածվեց գիտափորձագիտական մեթոդի, թերևս, նախորդ դարի երկրորդ կեսին (1953թ.), երբ ամերիկյան ՌԵՆԴ «ուղեղային կենտրոնի» աշխատակիցներ Գորդոնը և Հելմերը մշակեցին կանխատեսումների տեխնոլոգիա, որն ի պատիվ վերոնշյալ Ապոլոնի տաճարի տեղանվան՝ կոչվեց «Դելփի»: Այդ մեթոդի էությունը հետևյալն է. հետազոտվող խնդրի ապագայում հնարավոր զարգացումների վերաբերյալ կատարվում են մի քանի փուլանի, հաջորդաբար ճշգրտվող հարցումներ ոլորտի փորձագետներին: Արդյունքում, ստացված պատասխանները և գնահատականները համադրվում են և որոշակի ձևերով մշակվում:

Անշուշտ, իրականում «Դելփի» տեխնոլոգիան արդյունավետ կիրառելու համար անհրաժեշտ են բազմաթիվ նախապայմանների (օրինակ՝ փորձագետների անոնիմությունը, նախորդ փուլի հարցումների պատասխանների օգտագործումը փորձագետների կողմից և այլն) խստիվ պահպանում: Սակայն հիմնական գործոնը, իհարկե, բարձր որակավորում ունեցող փորձագիտական ռեսուրսի և այդ ռեսուրսի նպատակաուղղված կիրառման մշակույթի առկայությունն է: Այսօր «Դելփիի» տրամաբանական և գաղափարախոսական հենքի վրա կիրառվում են առնվազն 10-15 կանխատեսման մեթոդներ (որոնցից հատուկ նշենք սցենարային մշակումները), որոնք լայնորեն օգտագործվում են մի շարք երկրներում. դրանց միջոցով տրվում են ապագայի փորձագիտական գնահատականներ քաղաքականության, տնտեսության, գիտության, տեխնիկայի և այլ ոլորտներում:

Նշենք, որ վերջին ժամանակներում գլոբալ մասշտաբի կանխատեսումների թիվը զգալի աճել է: Օրինակ, վերջերս հրատարակվեց հայտնի *STRATFOR* կազմակերպության ղեկավար Ջորջ Ֆրիդմանի «Հաջորդ հարյուր տարին» ուշագրավ աշխատությունը: Սակայն կարծում ենք, որ «կանխատեսումների շուկայում» առանձին տեղ է գրավում 2008-ի վերջին ԱՄՆ Միացյալ ուժերի հրամանատարության *(USIFCOM)* կողմից հրապարակված «Միացյալ ուժերի գործողությունների միջավայրը» *(The Joint Operating Enviroment - JOE)* փաստաթուղթը, որում Պենտագոնի մասնագետները փորձ են կատարել կանխատեսել քառորդ դար հետո մեր մոլորակի վրա սպասվող ռազմաքաղաքական իրավիճակը:

### *Պենտագոնի փիլիսոփայությունը*

Հատկանշական է, որ ամերիկյան զինվորականներն իրենց վերլուծությունը սկսում են անցյալի փորձի և որոշ խոհափիլիսոփայական խնդիրների դիտարկումից: Ըստ նրանց՝ պատերազմի և խաղաղության վերաբերյալ պատկերացումները, որոնք ձևավորել էին դեռևս Սուն-Ցզին (մ.թ.ա. 6-րդ դար) և արդեն 19-րդ դարում՝ Կարլ ֆոն Կլաուզևիցը, առայսօր մեծ փոփոխություններ չեն կրել: Հատկանշական է, որ հաղթանակի բանաձևը 21-րդ դարի ամերիկյան ստրատեգները, ինչպես և Սուն-Ցզին, տեսնում են ճանաչողության հարթությունում: Այդ իսկ պատճառով հաճախ են անդրադառնում չին դասականի բանաձևին. «Եթե գիտես քեզ և գիտես թշնամուդ, ապա միշտ կհաղթես, եթե գիտես քեզ, բայց չգիտես թշնամուդ, մեկ կհաղթես, մեկ կպարտվես, եթե չգիտես քեզ և չգիտես թշնամուդ, ամեն մի ճակատամարտ հղի է պարտությամբ»:

Չի կարելի չհամաձայնել նաև փաստաթղթում տեղ գտած այն պնդման հետ, որ ներկայիս քաղաքական լիդերները բավական ուշ են գիտակցում և ըմբռնում տեղի ունեցող արագ փոփոխությունները, իսկ ապագայի վերաբերյալ նրանց պատկերացումները հաճախ ընդամենը առօրյայի իրողությունները պարզ էքստրապոլյացիայի միջոցով ապագա տեղափոխելու փորձ են: *ՅՕԵ-ի* հեղինակներն այս խնդրին մոտենում են ինքնաքննադատորեն և մատնանշում են այն սխալները, որոնք թույլ է տվել ամերիկյան ռազմաքաղաքական ղեկավարությունն անցյալում՝ անգամ մոտ ապագայի վերաբերյալ ունեցած թյուր պատկերացումների հետևանքով:

Ամերիկյան ստրատեգներն առանձնապես կարևորում են իշխանությունների քաղաքական կամքի գործոնը, որի առկայությունն անգամ սակավ ռեսուրսների տիրապետող երկրներին ընձեռում է մեծ հեռանկարներ:

### *Գլոբալ տնտեսությունն ապագայում*

Համաձայն Պենտագոնի փորձագետների, հաջորդ 25 տարում համաշխարհային տնտեսությունն աճելու է ավելի քան երկու անգամ, և $100 մլրդ-ը[1] գերազանցող *ՀՆԱ* են ունենալու ոչ միայն ներկայիս տնտեսական հսկաները, այլև Բանգլադեշը, Նիգերիան, Պակիստանը, Ֆիլիպինները և Վիետնամը: Այդ երկրները փորձելու են առաջատար ռազմաքաղաքական դերակատարում ձեռք բերել իրենց տարածաշրջաններում և իրենց շուրջ ձևավորել համապատասխան միավորումներ: Բոլոր պարագաներում ԱՄՆ-ը իր $21 տրլն ՀՆԱ-ով լինելու է տնտեսական ոլորտի առաջատարը, սակայն նրան այդ ցուցանիշով ընդհուպ մոտենալու է Չինաստանը ($16 տրլն), որը և համարվում է Միացյալ Նահանգների հիմնական մրցակիցն ապագայում նույնպես: Մնացյալ

[1] Փաստաթղթում հաշվարկները կատարվել են «մինչճգնաժամային» դոլարի փոխարժեքով:

երկրներն էապես զիջելու են այդ տերություններին (Ճապոնիա՝ $7 տրլն, Հնդկաստան՝ $6 տրլն, Գերմանիա և *Մեքսիկա* ՝ $4 տրլն և այլն)։

Փաստաթղթում շեշտադրվում է, որ եթե չձեռնարկվեն անհրաժեշտ քայլեր, ապա արդեն մոտ ապագայում պետք է սպասել էներգետիկ ճգնաժամի. այսօր նավթահանումն աշխարհում ունի կարծես թե տեխնոլոգիական սահման՝ օրական 110 մլն բարել, սակայն արդեն 2012թ. պահանջվելու է օրական 186 մլն բարել, և դեռ պարզ չէ, թե ինչպես է լուծվելու այդ խնդիրը։

Սակայն միայն էներգետիկ խնդիրները չեն, որ սպառնում են մարդկությանը։ Համաձայն *ՅՕԵ-ի,* 2030թ. ջրի պակասը սպառնալու է մոտ 3 մլրդ մարդու, իսկ Մերձավոր Արևելքին և Հյուսիսային Աֆրիկային իրական «ջրային սով» է սպասվում։ Ուշագրավ է, որ Թուրքիայի կողմից Տիգրիսի և Եփրատի վրա կառուցվող ջրամբարները լուրջ խնդիրներ են ստեղծելու այդ երկրի և Իրաքի ու Սիրիայի միջև, ինչը կարող է պատերազմական գործողությունների առիթ հանդիսանալ։

### *Ինովացիոն պայքար և տեղեկատվական պատերազմ*

Պենտագոնի փորձագետներն ընդունում են, որ քաղաքականապես և տնտեսապես ԱՄՆ-ը կորցնում է բացարձակ մենատիրական դիրքերը, սակայն համոզված են, որ նախկինի պես այդ տերությունը գերակայելու է ինովացիաների (նորարարությունների) ոլորտում։ Առանձնակի շեշտվում է, որ ապագայի պատերազմներում հաղթանակի գրավականն են հանդիսանալու երևակայությունը և ինտելեկտը, իսկ այդ պատերազմները կարելի է որակել որպես մարդկանց «մտքի և հոգու» համար մղվող պայքար։ *ՅՕԵ-ի* փորձագետներն անվերապահորեն համոզված են, որ տեղեկատվությունը «ռազմավարական զենք է» և ելնում են այն դրույթից, որ «տեղի ունեցածի ընկալումն ավելին է նշանակում, քան տեղի ունեցածը»։

Այդ համատեքստում հատկանշական է, որ ռազմական գերատեսչությանը խիստ հուզում է այն, որ ամերիկյան բուհերում նկատվում են կազմալուծման երևույթներ, և նրանք սկսել են զիջել իրենց մակարդակով, օրինակ, հնդկական և չինական համալսարաններին։ *ՅՕԵ-ի* հեղինակների կարծիքով, ամերիկյան գիտակրթական ոլորտը կարիք ունի լուրջ կատարելագործումների և բարելավումների[2]։

[2] Այստեղ կարևոր է նաև եզրաբանությունը. ներկայումս հաճախակի դարձած «բարեփոխումները» (այս բառը «ռեֆորմ»՝ ձևափոխություն, տերմինի հայերեն սխալ թարգմանությունն է ընդամենը և բարելավման իմաստ չի պարունակում) երբեմն կարող են կազմալուծել գուցե և ոչ այնքան փայլուն գործող, սակայն, այնումանայնիվ, գործող համակարգերը և կառույցները։

### *Որոշ հետևություններ*

Հարկ է նշել, որ վերջին մեկ-երկու տասնամյակում հեղինակավոր կազմակերպությունների (օրինակ՝ ԱՄՆ հետախուզության ազգային խորհրդի - *NIC,* Համաշխարհային բանկի և նույն *JOE-ի)* կողմից հրապարակված կանխատեսումները որոշակիորեն ազդում են տարբեր երկրներում որոշումների ընդունման մեխանիզմի վրա: Ի լրումն, «հեղինակավոր կանխատեսումները» դարձել են նաև յուրահատուկ տեղեկատվական-հոգեբանական ազդեցության գործոն, քանի որ դրանք ներգործում են նաև միջազգային հանրության վրա: Հանգամանքների այս համալիրն ակնհայտորեն անդրադառնում և ուղղորդում է ընթացիկ ռազմաքաղաքական, տնտեսական զարգացումներն ու այդպիսով ձևավորում ապագան ինչ-որ չափով համապատասխան կատարված կանխատեսումների (հիշենք Դելփիի քրմուհիների հրաման-հրահանգները):

Միևնույն ժամանակ, «հեղինակավոր կանխատեսումները» բարձրակարգ մասնագետների կոլեկտիվ աշխատանքի արդյունք են և օգտակար տեղեկատվություն են պարունակում ոչ միայն սեփական ղեկավարության, այլև ուրիշների համար: Այդ առումով, ըստ մեզ, ուսանելի են հատկապես *JOE-ի* հեղինակների փիլիսոփայությունը և, մասնավորապես, մոտեցումները գիտելիքների ոլորտին:

Վերոնշյալի համատեքստում, թերևս, ավելորդ չէ ևս մեկ անգամ մեջբերել Սուն-Ցզիի բանաձևը. «Եթե գիտես քեզ և գիտես թշնամուդ, ապա միշտ կհաղթես, եթե գիտես քեզ, բայց չգիտես թշնամուդ, մեկ կհաղթես, մեկ կպարտվես, եթե չգիտես քեզ և չգիտես թշնամուդ՝ ամեն մի ճակատամարտ հղի է պարտությամբ»: Այս հիմնադրույթն առավել քան ակտուալ է նաև հայ հանրության համար: Լինելով փաստացիորեն պատերազմող երկիր՝ մենք բավական աղոտ պատկերացումներ ունենք Ադրբեջանի և այդ երկրի հասարակության վերաբերյալ. խոսքն այստեղ այդ երկրի ռազմական ներուժի մասին չէ, ինչին պետք է որ քաջատեղյակ լինեն մեր զինվորականները: Բավական է նշել, որ առայսօր ՀՀ-ում հազվագյուտ են ադրբեջաներեն լեզվին տիրապետողները, մենք աղոտ ենք պատկերացնում այդ ժողովրդի մշակույթը, էթնոհոգեբանությունը և այլն: Իրավիճակը գրեթե նույնն է մեր մնացյալ հարևանների առումով: Սակայն ամենակարևորն այն է, որ մենք բավարար գիտելիքները չունենք նաև Հայության, այսինքն՝ մեր մասին: Հայագիտության ոլորտում հետազոտությունները հիմնականում վերաբերում են նյութական մշակույթին (ինչն, անշուշտ, նույնպես խիստ կարևոր է) և անհամեմատ սակավ են մարդկային ու հանրային ոլորտին առնչվող սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունները: Կարելի է փաստել, որ ինքնաճանաչողության խնդիրն այսօր մեր հանրության ամենահրատապ և, միևնույն ժամանակ, ամենաքիչ մշակված բնագավառն է:

# ՌԵՖԼԵՔՍԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

*Էռնեստ Գրիգորյան*[1]

Ռեֆլեքսիվ կառավարումը ընդդիմախոսի (օպոնենտի) վրա հատուկ ներգործություն է՝ վերահսկող կողմի կանխորոշած որոշումն ընդունել տալու նպատակով: Ներգործության այս ձևը ռազմական գործում օգտագործվել է հնագույն ժամանակներից, բայց մինչև անցյալ դարի վաթսունական թվականներն այն որպես անհրաժեշտ բաղադրատարր չէր ներառվում որոշման ընդունման սոցիալական գործընթացներում: Այն առավել ևս քիչ է դիտարկվել որպես սոցիալական տեղեկատվության մեկնաբանության գործընթացների անհրաժեշտ տարր: Այնինչ Չինաստանում ռեֆլեքսիվ կառավարման գործելաոճը ստրատագեմների (ռազմական հնարքների) ձևով միահյուսված է առօրեական մտածողության հենքին, և անգամ միջնակարգ դպրոցների սոցիոլոգիայի դասագրքերը ստրատագեմային գործունեության ուղեցույցներ են հանդիսանում: 1980-90-ական թթ. սոցիալական մտքի աշխուժացումը շրջանառության մեջ մտցրեց ռեֆլեքսիվ կառավարում, կարծիքի մանիպուլյացիա հասկացությունները և ստեղծեց Վ.Լեֆկրի աշխատանքների (60-ականներին սկսված) վրա հենվող նոր ուղղություն:

Տեղեկատվական ներգործության արդյունավետության աստիճանը գնահատելու փորձերը մինչև այն պահը, երբ այդ ներգործությունը տեղի է ունեցել, ռեֆլեքսիվ կառավարման նոր մեթոդների զարգացման ու նոր մոդելների խթան հանդիսացան, որոնցում արտացոլվում էր հակառակորդի մտավոր ուղղվածությունը: Ռեֆլեքսիվ կառավարման հասկացությունն օժանդակել է կանխատեսման մոդելների մշակմանը. որոշում կայացնողը ջանում է գուշակել հակառակորդի հնարավոր հակադարձումը տարբեր իրավիճակներում: Օգտագործելով ռեֆլեքսիվ կառավարումը՝ կարելի է էականորեն նեղացնել կանխատեսումների պարադիգմի շրջանակները՝ այն փոխարինելով *ապագայի կանխորոշման* պարադիգմով:

Ցանկացած տեղեկատվական հաղորդում, այսպես թե այնպես, և՛ վարքագծի կանոնավորում է, և՛ նպատակաուղղված ազդեցություն մարդու գի-

[1] Հայաստանի ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող:

տակցության վրա: Այն նույնպես ռեֆլեքսիվ կառավարման ենթատեսակ է: Ընդհանուր առմամբ *ռեֆլեքսիվ կառավարման խնդիրը* կառավարող գործակալի կողմից լսարանի տեղեկացվածության այնպիսի առանձնահատկության ձևավորումն է, որի պարագայում լսարանի համար ցանկալի որոշում (որն ապահովում է նրա սուբյեկտիվ հավասարակշռությունը) է հանդիսանում կառավարող գործակալի համար պահանջվող (կամ առավելագույնս նրա համար շահավետ)՝ լսարանի գործողությունների վեկտորը: Կարճ ասած՝ ռեֆլեքսիվ ներգործությունը ներառում է տեղեկատվական հաղորդման ծանրոց ընդդիմախոսին՝ նրա վարքագծի դետերմինացման նպատակով:

Բերենք մի օրինակ: Դիցուք, ինչ-որ պետություն, ասենք՝ A-ն, պատրաստ է թռիչք կատարել սոցիալ-տնտեսական զարգացման մեջ, ինչն անբարյացակամորեն կընդունվի հարևանների կողմից: Բայց A-ն կարող է իրականացնել իր ինտենցիան (մտադրությունը) միայն այն դեպքում, եթե հարևանները չդիմեն ակտիվ ռազմական գործողությունների: Բայց նրանք կդիմեն ակտիվ ռազմական գործողությունների միայն այն բանից հետո, երբ համոզվեն, որ A-ն սկսում է շրջանցել իրենց: A-ի հնարքն այն է, որ այնպիսի «տեղեկատվական փաթեթ» ուղարկի հարևաններին, ինչը կհամոզի նրանց, որ A-ն նման զարգացման համար անհրաժեշտ ուժեր չունի: Այսպիսով, A-ն սկզբում գրանցում է իր մտադրությունը, այնուհետև որոշում հակառակորդի դրությունը, ինչը թույլ կտա նրան իրականացնել մտադրությունը, և վերջապես, A-ն ընտրում է տեղեկատվական հնարքը, որպեսզի հակառակորդին բերի A-ի համար ցանկալի դրության: Իհարկե, ռեալ պայմաններում հարևան երկրների հետախուզական մարմինները քնած չեն, սակայն կարելի է տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ժամանակ շահել:

Բայց կարող է այլ իրավիճակ լինել: A-ն բազմաթիվ պլաններ և նպատակներ ունի, և կախված դիմակայող պետությունից, ընտրվում է հնարք կամ շատ հնարքներ, որոնք մղում են նրան տարբեր ռազմավարությունների: Եվ ահա կախված այն բանից, թե որ հնարքի վրա կբռնվի հարևան պետությունը, կիրառվում է զարգացման նախապես պատրաստված սցենարներից մեկը:

Բնակչությանը մեծ օգուտ կբերեին մանրամասն պատրաստված այն ուղենիշները, որոնք կբացատրեին երբ և որ ռազմավարությունը պետք է ընդունեն հերթական սոցիալական ապատեղեկատվության ժամանակ: Օրինակ, եթե դոլարի անկում են կանխատեսում, ապա արժե՞, արդյոք, հավատալ դրան:

Արևմտյան այնպիսի սոցիոլոգների, ինչպիսիք են Դ.Բելը, Օ.Թոֆլերը, Ս.Հանթինգթոնը և այլք, շատ աշխատանքներ նման հնարքներ են, որ ապահովում են գլոբալացման գաղափարաբանական սատարումը: Նրանց աշխատությունները նման են պատերազմի ժամանակ շատ տարածված այնպիսի հնարքների, երբ տպագրվում են կեղծ «ճանապարհային քարտեզներ», որոնք

ցույց են տալիս այն, որ իրականում անանցանելի ճանապարհներն անցանելի են, և որոնք դրվում են, օրինակ, թույլ պաշտպանվող զրահագնացում, որը հակառակորդը հեշտությամբ կարող է զավթել: Ճիշտ նույն կերպ էլ այսօր մեծ տարածում են տալիս Մարքսին՝ խոսելով ահռելի տպաքանակների մասին, բայց նպատակն այն է, որպեսզի մարդկությանը կրկին վերադարձնեն արյան ու մարդակերության այն նույն ճանապարհին, որից կարծես թե մարդկությունը սկսել է դուրս է գալ:

Սոցիոլոգիական տեսությունների լայն պրակտիկային անդրադառնալիս նկատելի է դառնում միջնորդի պարտադիր առկայությունը, որը եթե չի էլ պատվիրում նման տեսությունների որոշակի տեսակ, ապա գոնե հետաքրքրված է դրանց տարածմամբ և ապահովում է դրանց բազմացումն ու ժողովրդականացումը: Պոզիտիվիստական սոցիոլոգիայի ինքնառեֆլեքսիան համեստորեն բաց է թողել այս առանձնահատկությունը՝ աչք փակելով այն գաղափարների աջակցության, տարածման և զանգվածների սեփականությունը դարձնելու ֆինանսանյութական հիմնավորումների վրա, որոնք այսօր հայտնի են որպես եվրոպական սոցիոլոգիայի դասական նմուշներ: Մինչև Օ.Կոնտը, Կ.Մարքսը, Է.Դյուրկհեյմը կամ մեկ այլ սոցիոլոգ հայտնի կդառնային լայն զանգվածներին, պետք է գտնվեին այն հովանավորները, ովքեր խիստ հետաքրքրված կլինեին հենց նրանց գաղափարների տարածմամբ՝ նրանց աշխատություններն այդ հովանավորների փողերով հրատարակելու և հասարակության մեջ տարածելու համար: Առանց ազդեցիկ և ապահովված խմբի շահերին նման «համապատասխանության» հնարավոր չէր, որ բանիմաց սոցիոլոգը կարողանար գոնե որպես սոցիոլոգիայի դասախոս տեղավորվել եվրոպական համալսարանում. չէ՞ որ ռեկտորն «իր սոցիոլոգն» ուներ:

Սոցիոլոգիայի այս «պատվիրովի» լինելը, որն արդեն «սոցիոլոգիայի հայր» Օ.Կոնտի գրչով դրսևորվում էր իր իսկ սկզբնավորումից սկսած, նրան հենվելու ցանկացած փորձ դատապարտում էր անթիվ տառապանքների, ավերածությունների և միլիոնավոր մարդկանց մահվան: Ամերիկյան հետազոտողը հաշվարկել էր, որ այն հասարակություններում, որոնք որպես դավանանք ընդունել էին Կ.Մարքսի ուտոպիան, միայն քաղաքացիական պատերազմներում, ըստ Մարքսի՝ «դասակարգային պատերազմներում XX դարում զոհվել են մոտ 200 մլն մարդ[2]: «Պատվիրովի» են նաև աշխարհաքաղաքագետների աշխատանքները, որոնցում կոդավորված են այն երկրների շահերը, որոնք աջակցում և իրական հակառակորդին էին մոտեցնում այդ տեսությունները:

Բայց, այնուամենայնիվ, մենք ստիպված ենք ապրել, աշխատել և հազարավոր որոշումներ ընդունել հենց բազմաթիվ պատրանքների հենքի վրա:

[2] Տե՛ս *Rummel R.J.*, Libertarianism and International Violence. The Journ. Of Conflict Resolution 27, March, 1983, pp. 27-71

Գիտակցության զոմբիավորման մեխանիզմներում մեծ պարզություն մտցնելու փորձը առանց փոխհատուցման չի մնա:

Լայն գլոբալ հասարակությունում տեղի կունենա ռեֆլեքսիվ ներգործության ինտենսիվացում: Եվ դա հատկապես անզիջում կլինի տեղեկատվական ոլորտում: Դիտարկենք մի շարք ակտուալ օրինակներ:

Ենթադրենք, թե երկու սոցիալական խմբերի (էթնիկական, քաղաքական), ասենք՝ կարմիրների՝ A և սպիտակների՝ B միջև առճակատում է ծագել և դաժան փոխադարձ տեղեկատվական հարվածներ են կատարվում: Օգտվելով արդի հանգամանքներից՝ այդ ընդհարումները տեղափոխենք ինտերնետ-հարթություն: Դասակարգենք ագրեսիաների հնարավոր տեսակները.

1. Ասենք՝ A սուբյեկտը կոտրում է B սուբյեկտի կայքը (դատողությունները նույնն են, եթե խոսքը վերաբերում է խաբեությանը, թալանին կամ հափշտակությանը): B սուբյեկտը սնանկացել է և վրեժի է ծարավ, այսինքն՝ հակադարձ հարված է պատրաստում, օրինակ՝ A-ին դատի է տալիս:

2. A սուբյեկտը բարդացնում է իր գործողությունները. կոտրում է իր կայքը, բայց դրանում մեղադրում է B սուբյեկտին (տարածված սոցիալական գործողություն է. քավության նոխազի, մեղավորի որոնում): B սուբյեկտի դրությունը ծանրաբեռնված է A-ի կողմից «հրահրվող» մեղադրանքներով և բարոյական ռեզոնանսով ու լրացուցիչ ապացուցման անհրաժեշտությամբ (որ դու ուղտ չես):

3. A-ն էլ ավելի է դժվարացնում իր տեղեկատվական գրոհները՝ ընդլայնելով ազդեցության գոտին B-ի կողմնակիցների վրա: Այդ նպատակով A-ն ստեղծում է իր կայքը, բայց այն ներկայացնում է իբրև B-ին պատկանող, որտեղ A-ն պատկերվում է դրական բնութագրերով: (Բնորոշ իրավիճակ է քաղաքական հարթությունում, երբ, իբր, ընդդիմադիր մամուլը, որ ապրում է իշխանության միջոցների հաշվին, սիրալիր կծում է նրան՝ լուրջ քննադատության փորձ չանելով): B-ն հայտնվում է շինծու վիճակում (արդարացողի իրավիճակում). անհրաժեշտ է ապացուցել սեփական կողմնակիցներին, որ կայքն իրենը չէ, և որ նախկինի պես բացասաբար է վերաբերվում A-ին:

4. Հաջորդ ինտելեկտուալ մակարդակում A-ն ձեռնամուխ է լինում B-ի կողմնակիցների ջախջախմանը՝ նրանց մեջ ստեղծելով միմյանց նկատմամբ թշնամական խմբավորումներ: Նա կոտրում է իբր B-ին պատկանող այդ կայքը, բայց դա բացատրում է նրանով, որ B-ի կողմնակիցների որոշ, ավելի արմատական մասը համաձայն չէ կայքում զետեղված A-ի դրական բնութագրերի հետ, համարում է, որ B-ն դավաճանություն է գործել և մեղադրում է B-ի կողմնակիցների մյուս մասին թշնամուն զիջելու մեջ: Ուստի, այդ արմատական խումբն էլ կոտրել է տվյալ կայքը: (Քաղաքական ճակատամարտերում հաճախ է պատահում, որ ընդդիմադիր շարքերում, բացի վարժեցված ու սնուցված կլիենտելից, նաև լուրջ հասարակություն է լինում, որը կարող է

վնասել իշխանությանը, ուստի նրան վարկաբեկելու համար կազմակերպվում է կեղծ-ընդդիմադիր թերթի ջարդ իբր արմատականորեն տրամադրված լուրջ ընդդիմադիր հանրության կողմից: Այն, անշուշտ, մեղադրվում է սեփականության իրավունքների խախտման, մամուլի ազատության ճնշման, պետական հեղաշրջման փորձի մեջ և ճնշվում է իշխանության կողմից): B-ի դրությունն էլ ավելի է բարդանում: Ինչպե՞ս պետք այն գործի, որպեսզի դուրս գա լարված թակարդներից:

5. Բայց A-ն շարունակում է ինտելեկտուալ հարձակումը: Այնուհետև A-ն ստեղծում է կայք, որտեղ քննադատվում է A-ն ինքը և որտեղ B-ն ներկայացված է բավական դրականորեն, և առաջարկում է A-ի նկատմամբ քննադատորեն տրամադրվածներին միանալ այդ կայքին՝ թողնելով իր էլեկտրոնային հասցեները: Որսված հասցեներով սկսվում են անհատական պատժամիջոցները, և B-ի կողմնակիցների շարքերը նոսրանում են: (Միամիտներին իրենց կողմը գրավող կուսակցություններն ու շարժումները միշտ էլ բավական շատ են եղել): Բայց B-ն խնդիրներ ունի: Նրան սկսում են մեղադրել դավաճանության և թշնամու համար աշխատելու մեջ: B-ն ստիպված է գլուխ կոտրել այս վիճակից դուրս գալու համար:

6. A-ի ինտելեկտուալ ռեսուրսները դեռ սպառված չեն: A-ն անցնում է հայեցակարգային գրոհի: Որոշակի քաղաքական-տնտեսական ուղղություններ (սոցիալիզմ, լիբերալիզմ, քրիստոնեություն, սիոնիզմ և այլն) ներկայացնող A-ն ստեղծում է կայք, որում քննադատվում է A-ն, այսինքն՝ իրականացվում է ոչ-A գործողություն (հակասոցիալիզմ, հակալիբերալիզմ, հակաքրիստոնեություն, հակասիոնիզմ և այլն), այնուհետև ստեղծվում է կայք, որը քննադատում է այդ կայքը որպես սխալ (այսինքն՝ իրականացվում է պայքար հակասոցիալիզմի, հակալիբերալիզմի, հակաքրիստոնեության, հակասիոնիզմի և այլնի դեմ), նշանակում է՝ իբր համաձայն է A-ի հետ, բայց միևնույն ժամանակ մեղադրվում են կոնկրետ անձինք, էթնոսներ, խմբեր, այդ թվում և B-ն, որոնք, իբր, այդպիսի ոչ ճիշտ քաղաքականություն են վարում (հակասոցիալիզմ, հակալիբերալիզմ, հակաքրիստոնեություն, հակասիոնիզմ և այլն): Բնականաբար, մեղադրանքները հորինված են, բայց կան վավերական հավաստումներ՝ կայքերի ստեղծումը, և B-ն կրկին հայտնվում է ինտելեկտուալ ծուղակի առջև:

7. Բայց իրավիճակն էլ ավելի է բարդանում, երբ խաղի մեջ է մտնում երրորդ անձը, ասենք՝ կապույտները՝ C-ն, որը սովորաբար շահագրգռված է A-ի ու B-ի միջև հարաբերությունների վատթարացմամբ: Այդ նպատակներով C սուբյեկտը կոտրում է B սուբյեկտի կայքը, բայց թողնում է հետքեր, որոնք իբր տանում են դեպի A սուբյեկտը: Բնականաբար, A-ի ու B-ի հարաբերությունները պետք է վատանան: (Ամենից հաճախ պատահող օրինակը. մեկ էթնոսի

ներկայացուցչի սպանության մեջ միանգամից մեղադրում են այլ էթնոսի ներկայացուցչին, որի հետ այդ էթնոսը գտնվում է թշնամական հարաբերությունների մեջ: Պատերազմների սկսման համար սա սովորական բան է): Իհարկե, եթե B-ն խելացի է, ապա պետք է հրաժարվի միջնորդներից և անմիջապես բանակցությունների դուրս գա A-ի հետ: Բայց C-ն դա նախատեսում է և շրջափակում է ուղղակի կապը նրանց միջև: Ինչպե՞ս պետք է վարվի B-ն այս դեպքում՝ պատերազմից խուսափելու համար:

8. Այնուհետև C-ն սկսում է իր ամենօրյա տաղտուկ գործունեությունը, որն անհրաժեշտաբար բխում է նրա՝ երրորդ կողմի դերից: C-ն կանոնավորապես կոտրում է A-ի և B-ի կայքերը՝ թողնելով դեպի հակառակ կողմը տանող հետքեր, այսինքն՝ որպեսզի A-ն մեղադրի B-ին, իսկ B-ն, հակառակը, A-ին: (Եթե հարկավոր է ուժեղացնել թշնամանքը պետությունների կամ էթնոսների միջև, ապա սպանությունները կրկնվում են շատ անգամ, ընդհուպ մինչև իբր երկու կողմերից նախաձեռնվող ահաբեկչական գործողությունների կազմակերպումը): Այստեղ և՛ A-ն, և՛ B-ն պետք է իսկապես գլուխ կոտրեն՝ թուլացնելու համար առճակատումը մարտի մեջ մտնելուն պատրաստ իրենց կողմնակիցների միջև:

9. Բայց C-ն խորամանկ է ու նենգ: Որպեսզի A-ն ու B-ն չմիավորվեն կամ չթուլացնեն թշնամանքը, C-ն համապատասխան կեղծանունների տակ՝ մերթ A, մերթ B, հայտնվում է հակադիր կայքերում՝ ջախջախիչ քննադատության ենթարկելով հակառակորդ կողմին: (Երրորդ կողմին պատկանող լրատվամիջոցներն անընդհատ կրակին յուղ են ավելացնում՝ բորբոքելով ու թեժացնելով առճակատումը): Այստեղ գայթակղվելու վտանգ է առաջանում. կողմերից ո՞րը կգայթակղվի մյուս կողմի հասցեին հնչող մեղադրանքների ու սպառնալիքների հռետորականությամբ և գործիք կդառնա C-ի ձեռքին: Սովորաբար, պակաս ինտելեկտուալ կողմը, բայց դա չի նվազեցնում սպառնալիքները մյուս կողմի համար:

10. Կանխավայելելով հաղթանակը՝ C-ն միաժամանակ հռչակում է հանդուրժողականության դոկտրինը և իրեն այդ հանդուրժողականության առջևից ընթացող համարելով՝ մեղադրում է և՛ A-ին, և՛ B-ին միմյանց նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի մեջ: Այս հիման վրա C-ն մյուս բոլոր սուբյեկտներին կոչ է անում դատապարտել այդ երկու կողմերին և նրանց արտաքսյալի կարգավիճակ տալ՝ նրանց երկուսի նկատմամբ հետագա պատժամիջոցների կիրառմամբ: Փաստերը վերցվում են կայքերից: Սադրիչ C-ն ունի նաև իր գաղափարաբանական հետաքրքրությունները՝ «լինել կասկածից դուրս», ուստի դատավորի պատմուճան է հագնում: B-ի պաշտպանությունը ենթադրում է հայեցակարգային իրազեկություն, այսինքն՝ նա ևս պետք է խաղալ կարողանա այդ տարածքում և հայեցակարգեր ստեղծի, որոնք կսահմանափակեն կամ կճնշեն C-ի ազատությունը:

11. Տեսնելով անկում ապրող A-ին և B-ին՝ C-ն իրեն B-ի դաշնակից է ձևացնում (ծածուկ՝ նաև A-ի դաշնակից)՝ ընտելացնելով նրան և դեպքերի մեծամասնությունում նույնիսկ աջակցելով նրան: Բայց գալիս է պահը, երբ C-ն վերջնականապես դավաճանում է B-ին (ճիշտ նույն կերպ էլ՝ A-ին), պահ, երբ B-ի ուժերը սպառվել են, և նա չի կարող դիմադրություն ցույց տալ C-ին: (Պատերազմներում հաճախ է պատահում, որ բավական երկար ժամանակ պաշտպանվում է դաշնակցության հավատարմության ու հուսալիության մասին թեզիսը, բայց ամենահարմար պահին այն դեն է նետվում: Օրինակներ. «Արևմուտքը մեզ կօգնի», «Անգլիան մեզ հետ է» և այլն): Խորհուրդը, որ կարող է օգնել B-ին դուրս գալ իրավիճակից, տրված է դեռ «Արտխաշաստրայում», 2 հազար տարի առաջ. «Չարժե, որ թույլը միության մեջ մտնի ուժեղի հետ, թույլերը միավորվում են միջակների հետ, որպեսզի դիմակայեն ուժեղներին»:

Իհարկե, իրականության մեջ ամեն ինչ շատ ավելի բարդ է, և սոցիալական փոխհարաբերությունների սարդոստայնը միայն լայնանում է՝ իր մեջ առնելով բոլոր կողմերը: Բայց հաստատելու համար, որ այս սխեմաներն օդից վերցված չեն, բերենք իրական մի օրինակ:

«Հրեական նորություններ» թերթի 2008թ. հունիսի №18(246)-ում տպագրված է փոքրիկ հոդված «Նացիստական սարդոստայնում» վերնագրով, որում նկարագրվում է նացիոնալ-սոցիալիստական *«Phenix»* կայքի բովանդակությունը՝ հակասեմիթական կարգախոսներ, ինչպես նաև հակամուսուլմանական կոչեր, ստալինականությունը քննադատող նյութեր, ստալինականության դատապարտում Ուկրաինայում հոլոդոմորի կազմակերպման համար և, վերջապես, սևամորթներին և ընդհանրապես ներգաղթյալներին ոչնչացնելու կոչեր: Վերլուծություն անցկացնենք:

Տեղեկատվական պատերազմի կանոններով, հրեական թերթը չպետք է մեջտեղ բերի իր գաղափարախոսության թույլ կողմերը և *«Phenix»* կայքի լայն ընդգրկումը, որ մասնաճյուղեր ունի շատ երկրներում և բազմալեզու է: Այս առաջին տարօրինակությունը 1-ին քայլն է:

Երկրորդ տարօրինակությունը կայքի հասցեի նշումն է: Այն կարող էր ծածուկ պահվել, որպեսզի անառողջ հետաքրքրության տեղիք չտար և չդառնար իր համար թշնամական տեղեկատվության տարածիչ: Բայց հոդվածում նույնիսկ դրական գնահատական է տրվում կայքի կառուցվածքին, և ասես այն այցելելու հրավեր է արվում: Սա 2-րդ քայլն է:

Երրորդ տարօրինակությունը նացիոնալ-սոցիալիզմի նույնացումն է հակասեմիթականության, հակամուսուլմանության, հակասովետիզմի, Ուկրաինայի հակառուսական դիրքորոշման, ռասիզմի և ներգաղթյալների խտրականության հետ: Սա 3-րդ քայլն է: Ընդհանուր առմամբ, տեղեկատվական այս ռազմավարությունը համապատասխանում է մեր 6-րդ տարբերակին:

Նման կայքեր են ստեղծվում նաև ադրբեջանական կողմում: Բավական հայտնի է ադբեջանական կողմին պատկանող, բայց իբրև հայկական կայք գործող «Խրոնիկա» կայքի հետ կապված պատմությունը:

Յուրաքանչյուր տարբերակում ընկալման սուբյեկտը պետք է հակադարձ մտային գործողություն անցկացնի. եթե A-ն հարմարեցվում է B-ին, ապա պետք է հակառակ մտային ջանք գործադրի՝ փոխի B-ի և A-ի տեղերը (ինվերսիա կատարի, սիմետրիկորեն շրջի): Որքան բարդ է գործողությունը, որքան երկար է բազմաքայլությունը, այնքան ավելի շատ շրջելի գործողությունների քանակություն պետք է գործարկել: Եվ այստեղ գործի մեջ է մտնում «նորին մեծություն» ինտելեկտը: Եթե այն սպառված է և արդեն ի վիճակի չէ ապահովել շրջելի գործողությունների անհրաժեշտ քանակություն, ապա պետք է ասել, որ գործողությունը հաջողվել է և ընդդիմախոսը ծուղակն է ընկել: Շախմատիստները լավ կհասկանան՝ ինչի մասին է խոսքը:

# ԻՐԱՆ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Սամվել Մարտիրոսյան*

Նախագահական ընտրություններից հետո ծավալված իրադարձությունները նշանային դարձան գլոբալ իմաստով տեղեկատվական հոսքերի կառուցվածքի փոփոխության առումով: Իրանական հեղափոխությունը նոր խոսք բերեց տեխնոլոգիական հաղորդակցությունների ոլորտում: Մասնավորապես, առաջին անգամ տեղեկատվական ասպեկտն ամբողջովին տեղաշարժվեց դեպի ինտերնետ և մոբիլ տեխնոլոգիաներ, որոնք դաշտից գրեթե լիովին դուրս մղեցին ավանդական մամուլը:

Վերջին տարիներին նկատվում էր ավանդական լրատվամիջոցներից տեղեկատվական հոսքերի մի մասի տեղափոխման միտում դեպի այսպես կոչված այլընտրանքային կամ նոր մեդիա: 2008թ. օգոստոսի պատերազմը Վրաստանում կամ Իսրայելի Գազայի հատվածում իրականացվող «Ձուլածո կապար» գործողությունը որոշակի չափով նախապատրաստական փուլեր հանդիսացան: Այս հակամարտությունների ժամանակ արդեն, տեղեկատվական պատերազմում, ցանցային տեխնոլոգիաներն առաջին պլան մղվեցին: Հատկանշական էր Իսրայելի ԱԳՆ՝ երկրին օգնելու խնդրանքով պաշտոնական դիմումը բլոգերներին՝ «Ձուլածո կապար» գործողության ժամանակ տեղեկատվական պատերազմ մղելիս:

Իրանական իրադարձություններն այս առումով շրջադարձային էին: Իշխանությունների և ընդդիմության հակամարտությունը երկու կողմերի համար դարձավ ճակատամարտ տեղեկատվական դաշտի համար: Հաշվի առնելով այն, որ ընդվզողների շարքերում մեծ էր երիտասարդների թիվը, իսկ դիսիդենտների մեդիա-հնարավորությունները սահմանափակ էին, ընդդիմությունը որպես հիմնական գործիք ընտրեց ինտերնետը, հատկապես սոցիալական ցանցերն ու բլոգերը: Մոբիլ հեռախոսը դարձավ գլխավոր տեղեկատվական զենքը:

## *Մոբիլ տեխնոլոգիաների կիրառումը*

Իրանական իրադարձությունների տեղեկատվական առավել լուրջ բաղադրիչը դարձան *Twitter-ը*[1] *և Facebook-ը*[2]*:* Սկզբում այս սոցիալական ցանցերն օգտագործվում էին մոտավորապես այնպես, ինչպես Մոլդովայի հուզումների ժամանակ. երկրի ներսում տեղեկատվության օպերատիվ փոխանցման, ակտիվիստներին ներգրավելու, հանրահավաքներ և բողոքի ակցիաներ կազմակերպելու համար: Սոցիալական այս ցանցերում ակտիվ քաղաքացիների բարձր ներգրավվածությունը հնարավորություն է տալիս նրանց տեղեկատվության օպերատիվ տարածման աղբյուր դարձնել:

Բայց կապված այն բանի հետ, որ ընտրություններից հետո առաջին իսկ օրերին իշխանություններն սկսեցին սահմանափակել արտասահմանյան ԶԼՄ գործունեությունն այնտեղ, ուր բախումներ էին տեղի ունենում, սոցիալական ցանցերը դարձան վերջին նորությունների աղբյուր և դրանց փոխանցման միջոց: Իրանի իշխանություններն առաջին իսկ օրերին սահմանափակումներ մտցրին արտասահմանյան թղթակիցների աշխատանքի մեջ: Մասնավորապես, մի շարք լրագրողներ հետ ուղարկվեցին, իսկ մեծամասնությանն արգելվեց ռեպորտաժ վարել փողոցներից: Փաստորեն, արտասահմանյան մամուլը հայտնվեց տնային կալանքի մեջ, իսկ տեղի մամուլը հատուկ ծառայությունների կողմից վերցվեց կոշտ վերահսկողության տակ:

Մամուլի նկատմամբ կիրառվող արգելքները ստիպեցին ընդդիմությանը շրջանցող ուղիներ փնտրել: Գործի դրվեցին մոբիլ սարքերը: Այսօր միջին

---

[1] *Twitter* (անգլ. *twit* - «ծլվլալ», «շաղակրատել») – անվճար սոցիալական ցանց. միկրոբլոգերի համակարգ է, որն օգտվողներին թույլ է տալիս կարճ տեքստային նշումներ (մինչև 140 նիշ) ուղարկել՝ օգտագործելով վեբ-ինտերֆեյսը, *SMS-ը,* ակնթարթային հաղորդագրությունների ծառայությունները կամ անհատական համակարգիչների և մոբիլ սարքերի կողմնակի ծրագիր-հաճախորդները: *Twitter-ն* ստեղծել են Ջեկ Դորսին, Բիզ Սթոունը և Էվան Ուիլյամսը: Սկզբնապես նախագիծը մտածվել էր որպես հետևյալ հարցին պատասխանելու հնարավորություն. «Հիմա ի՞նչ ես անում»: Դորսին ուզում էր մի ինչ-որ պլատֆորմ ստեղծել, որն իրեն թույլ կտար մշտապես կարճ հաղորդագրություններ փոխանակել ընկերների հետ: *Twitter-ի* հաղորդագրություններն անմիջապես պատկերվում են օգտվողի էջում և ակնթարթորեն կարող են առաքվել այլ օգտվողների, որոնք բաժանորդագրված են դրանք ստանալու համար: Առաքումը կարող է տեղի ունենալ *Twitter* կայքի, ակնթարթային հաղորդագրությունների ծառայության, *SMS-ի, RSS-ի,* էլեկտրոնային փոստի կամ *Twitter*-հաճախորդի միջոցով:
Այսօրվա դրությամբ առավել դինամիկ աճող սոցիալական ցանց է: Մինչ իրանական իրադարձությունները, *Twitter* ցանցում մոտ 20 մլն գրանցված օգտվող կար: Ընդ որում՝ այս ցուցանիշի աճը վերջին ամիսներին հասնում է ամսական մի քանի տասնյակ տոկոսի, իսկ վերջին կիսամյակի աճը գերազանցել է 600%-ը:

[2] *Facebook* – հանրահայտ սոցիալական ցանցի վեբ-կայք, որն սկսեց աշխատել 2004թ. փետրվարի 4-ին: Հիմնադիրն է Մարկ Ցուկերբերգը: 2009թ. հունիսի վերջի դրությամբ՝ կայքում գրանցված էր ավելի քան 200 միլիոն ակտիվ մասնակից:

արժողության ստանդարտ բջջային հեռախոսը թույլ է տալիս ոչ միայն ինտերնետ մտնել, այլև օպերատիվ ռեժիմով ցանցում լուսանկարներ և տեսանյութեր հրապարակել անմիջապես իրադարձությունների վայրից:

Իրանցիները տեղի ունեցածը հենց իրադարձությունների վայրից հեռարձակում էին բջջային հեռախոսների օգնությամբ: Քանի որ *Twitter-ն* ավելի հեշտ կիրառելի է և, ամեն ինչից բացի, թույլ է տալիս *SMS* հաղորդագրություններ ուղարկել, այն շատ շուտ տեղեկատվության աղբյուր դարձավ ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրանց համար, ովքեր արտասահմանում էին հետևում իրանական իրադարձություններին: *Twitter-ն* այս առումով տեղեկատվության տարածման առավել խնայողական միջոց է, որովհետև թույլ է տալիս տնտեսել.

- ժամանակը, քանի որ առաքվող հաղորդագրությունն ունի նվա-զագույն չափ և ցանցում տեղակայվելու համար երկար ժամանակ չի պահանջում և, փաստորեն, ուղարկելուց հետո ինտերնետում հայտնվում է հաշվված վայրկյաններում,
- ֆինանսները, քանի որ հաղորդագրության հրապարակումը *Twitter* ցանցում հնարավոր է պարզ *SMS* հաղորդագրության օգնությամբ, որն ուղարկվում է սերվիսի շլյուզային (անցուղային) համարներին, ինչպես նաև բջջային հեռախոսների համար հատուկ ծրագրային ապահովման օգնությամբ, որը տնտեսում է տրաֆիկը:

Բացի այդ, *Twitter-ն* ունի դուստր սերվիս՝ *twitpic.com,* որտեղ կարելի է հրապարակել լուսանկարներ բջջային հեռախոսից գրեթե իրական ժամանակի հետ նույն պահին՝ տեքստի կրոս-հրապարակման և հենց *Twitter-ում* լուսանկարին հղում կատարելու հետ մեկտեղ: Այսպիսով, մեկ մարդն իր բջջային հեռախոսով կարող է ռեպորտաժ վարել իրական ժամանակի ռեժիմում, ամենածանր դաշտային պայմաններում և ժամանակի ու ֆինանսների նվազագույն ծախսմամբ: Իրականում *Twitter* սերվիսն օգտագործվում էր որպես անցուղի (շլյուզ). այնտեղից տեղեկատվությունն արդեն տարածվում էր մնացած բոլոր սոցիալական ցանցերին, բլոգերին և վերջնարդյունքում հայտնվում էր մամուլում: Ավանդական լրատվամիջոցներն այս անգամ իրոք չէին հասցնում իրանական բլոգերների և մոբիլ հանրային լրագրողների հետևից ինչպես Իրանի իշխանությունների գործողությունների, այնպես էլ այն պատճառով, որ ի տարբերություն լրագրողների՝ բլոգերները հայտնվում էին ուժայինների հետ ցուցարարների բախումների ամենավտանգավոր տեղերում:

Թե որքան կարևոր էր դարձել այդ կայքը տեղեկատվական դաշտում, կարելի է եզրակացնել ընկերության սերվերների նորոգման աշխատանքների պատմությունից դատելով: Հունիսի 15-ին *Twitter-ը* պաշտոնապես տեղեկաց-

րեց, որ մեկ ժամով համակարգն անջատվելու է՝ տեխնիկական աշխատանքներ կատարելու հետ կապված: ԱՄՆ Պետդեպարտամենը պաշտոնապես դիմեց *Twitter-ին* ՝ խնդրելով «չանջատել այն, քանի դեռ Իրանում ժողովրդավարական գործընթացներ են տեղի ունենում»: Ըստ *Reuters-ի,* Պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչը բացատրել է *Twitter-ի* սեփականատերերին, որ այն «հաղորդակցության կարևոր ձև է»:

Հուզումների երկրորդ օրվանից *Twitter-ն* ամբողջովին լցված էր իրանական հեղափոխության թեմայով: *#iranelection* հեշթեգը[3] ամենատարածվածը դարձավ *Twitter-ում:* Բացի այդ, սերվիսի ժողովրդականություն վայելող թեմաներից 3-5-ը մշտապես վերաբերում էին իրանականին:

Միայն իրանական թեմայով հաղորդագրությունների հոսքը *Twitter* ցանցում հսկայական էր: Պատճառը ոչ թե Իրանից եկող տեղեկատվության մեծ հոսքն էր, այլ այն, որ օգտվողների մեծամասնությունն օգնում էր տեղեկատվության տարածմանն ու պատճենում էր կարևոր հաղորդագրությունները: Այսպիսով, հիմնական հոսքը Իրանից եկող հաղորդագրությունների (համեմատաբար) ոչ մեծ հոսքի պատճենումներն էին:

*Twitter-ը* ամենահարմար սերվիսն էր, որն իր մեջ մեկտեղում էր սոցիալական ցանցերն ու մոբիլ տեխնոլոգիաները (անգամ այն պարագայում, երբ սոցիալական ցանցերի մեծ մասն այժմ տեղափոխվում է այլընտրանքային մոբիլ պլատֆորմ): Բացի այդ, տեղեկատվության տարածման համար բավական ակտիվորեն օգտագործվում էին լուսանկարներն ու տեսանյութերը, որոնց հանդեպ վստահությունը շատ ավելի մեծ է, քան տեքստային հաղորդագրությունների: Մասնավորապես, *Youtube* տեսահոսթինգում, *Flickr և Picasa* ֆոտոհոսթինգներում, ինչպես նաև նման այլ հոսթինգներում զետեղվում էին բավական մեծաթիվ տեսանյութեր դեպքերի վայրերից: Բայց քանի որ Իրանում արգելափակված էր ինտերնետ-կապը և դժվարություններ կային մեծաքանակ տեղեկատվության տեղակայման հետ կապված, այս հոսթինգներն ուշանում էին օպերատիվ առումով:

## *Տեղեկատվության զուգահեռ հոսքերի ձևավորումը*

Իրանական թեմայի շուրջ օգտագործող-մոբիլ տեխնոլոգիա (համակարգիչ)-սոցիալական ցանցեր-մամուլ ուղղությամբ տարածվող տեղեկատվության ծավալների խտացումը հանգեցրեց նրան, որ հետաքրքրությունը ԶԼՄ-ի հանդեպ սկսեց նվազել: Միևնույն ժամանակ, կտրուկ աճեց սոցիալական ցանցեր հաճախողների թիվը, և որ գլխավորն է՝ դրանց հեղինակությունը: Համապա-

[3] # նշանը, որով օգտվողները նշում են հաղորդագրության թեման, ինչը թույլ է տալիս առանձնացնել այն թեմատիկ որոնման ժամանակ:

տասխանաբար, տեղեկատվության՝ ողջ աշխարհում հսկայական լսարան ունեցող նոր հոսքերի առաջացումը հանգեցրեց միանգամից մի քանի բացասական տեղեկատվական հետևանքների:

Նախ՝ իրանական թեմատիկան անհապաղ իրենց նպատակներով սկսեցին օգտագործել սպամերները: Իրանական նշաններով հսկայաքանակ գովազդային տեղեկատվություն մտցրին ցանց (մասնավորապես, *Twitter* ցանց)՝ Իրանի հանդեպ իրարանցումային հետաքրքրությունը «նյութականացնելու» համար: Բացի այդ, Իրանից ստացվող տեղեկատվության անվան տակ սկսեց տարածվել ոչ միայն գովազդը, այլ նաև համակարգչային վիրուսներ. հաշվի առնելով թեմայի նկատմամբ հետաքրքրությունը և թարմ տեղեկատվություն ստանալու օպերատիվությունն ու մասշտաբայնությունը՝ համակարգիչների վարակվելու հավանականությունը նման պայմաններում էապես բարձրանում է:

Բացի այդ, ի հայտ եկան մեծ թվով սադրիչներ, որոնք ապատեղեկատվություն էին տարածում: Իրանցի օգտվողների արձագանքներից դատելով, ինչպես նաև ըստ տեղեկատվական հոսքերի վերլուծության, կարելի է ենթադրել, որ սոցիալական ցանցերում, իրավիճակի կտրուկ սրացման շրջանում, Իրանում գործում էին տարբեր կառույցներ, որոնք կարելի է բաժանել մի քանի խոշոր կլաստերների.

1. Ընդդիմության կողմնակիցներ Իրանում
2. Ընդդիմության կողմնակիցներ իրանցի վտարանդիների շրջանում, ինչպես նաև նրանց թվում, ովքեր ժամանակավորապես ապրում են արտասահմանում, օրինակ՝ ուսանողները
3. Ընդդիմության կողմնակիցներ այլ երկրների բնակիչների շրջանում, ովքեր համակրում են ցուցարարներին
4. Իշխող վարչակարգի կողմնակիցներ
5. Սադրիչներ, ենթադրաբար՝ վարչակարգի կողմնակիցներից, ինչպես նաև հատուկ ծառայությունների աշխատակիցներից, ովքեր ակտիվորեն ապատեղեկատվություն էին տարածում և տեղեկատվության հոսքերն ուղղորդում էին դեպի իրենց անհրաժեշտ հուն
6. Երրորդ երկրների սադրիչներ
7. Տեղեկատվական աղմուկ ստեղծող համակարգչային օգտվողներ:

Ընդդիմադիր տեղեկատվական հոսքի ներկայացուցիչները մշտապես ցանց էին մտցնում լարվածությունը թեժ պահող նյութեր: Երբ Իրանից նոր տեղեկատվություն չէր ստացվում (խոսքը հատկապես ֆոտո և տեսանյութերի մասին է), այդ ժամանակ զետեղվում էին ավելի վաղ ժամանակվա նյութերը՝ հուզական մակարդակը պահպանելու նպատակով: Հարկ է հաշվի առնել, որ

հոսքերի արագությունն այնքան նշանակալի էր, որ անգամ նոր նյութերի բացակայությունը մի քանի ժամվա ընթացքում քաոս էր առաջացնում և սպառնում էր խաղից դուրս բերել հիմնական խաղացողներին, համապատասխանաբար՝ նոր դերակատարների ասպարեզ բերելով: Սրանից խուսափելու համար ընդդիմադիր տեղեկատվական լիդերները ջանում էին մշտապես պահպանել թարմ կամ թարմի տեղ մատուցվող հնացած տեղեկատվության մատակարարման արագությունը, կամ էլ դրանք ներկայացնել նոր պարզաբանումներով ու մեկնաբանություններով: Օրինակ՝ զոհված ցուցարարների նույն լուսանկարները պարբերաբար ցանց էին մտցվում մահվան պատճառների տարբեր բացատրություններով:

Ինչ վերաբերում է սադրիչների (այսինքն՝ այն մարդկանց, ովքեր քողարկվում էին ընդդիմադիրների անվան տակ) ցանց մտցրած տեղեկատվությանը, ապա այն կարելի է բաժանել մի քանի խմբի: Ընդդիմադիրները ցանցում պարբերաբար տեղակայում էին սադրիչների անուններ, որոնք, նրանց կարծիքով, ապատեղեկատվություն և մանիպուլյացիոն բնույթի տեղեկատվություն են հրապարակել, որն, իր հերթին, կարելի է բաժանել երկու մեծ խմբի.

1. ապատեղեկատվություն, որը նպատակ ունի վարկաբեկել ընդդիմությունը կամ հանդարտեցնել մթնոլորտը: Համապատասխանաբար՝ այն կարելի է վերագրել կամ ակտիվիստների գործունեությանը, որոնք աջակցում են իշխող վարչակարգին, կամ իրանա-կան հատուկ ծառայությունների աշխատանքին,
2. ապատեղեկատվություն, որը նպատակ ունի առաջ բերել մեծ քաոս և ապակայունացնել իրավիճակն Իրանում: Նման տեղեկատվությունը, ամենայն հավանականությամբ, տարածվում էր կամ ընդդիմության, կամ հատուկ ծառայությունների ներկայացուցիչների ու երրորդ երկրներ ինտերնետ պատերազմների ակտիվիստների կողմից: Մասնավորապես, ընդդիմությունը մեղադրում էր իսրայելական Մոսսադին այն բանում, որ այն հենց *Twitter* ցանցի աշխատանքի միջոցով ապակայունություն տարածող խմբեր է ձևավորում:

Համաշխարհային մամուլն, իր հերթին, ստիպված էր մի կողմից օգտվել իրանական բլոգերներից, սոցիալական ցանցերից ստացվող տվյալներից և *Youtube*-ի տիպի կայքերում զետեղված տեսանյութերից: Մյուս կողմից՝ խնդիր կար ճիշտ զտել տեղեկատվությունը՝ ապատեղեկատվության ի հայտ գալուց խուսափելու համար: Ապստամբությունն սկսվելուց հետո արդեն երեք օր անց փողոցներում շատ լրատվամիջոցներ սեփական տեղեկատվության հաղորդման ռեժիմից անցում կատարեցին սոցիալական ցանցերի մոնիթորինգին. մի քանի բլոգեր նստեցրին խմբագրություններում: Նրանք զտում էին

*Twitter-ով* և այլ սոցիալական ցանցերով ու բլոգերով անցնող տեղեկատվական հոսքը:

Այսպես շարունակվեց այնքան ժամանակ, մինչև որ Իրանի իշխանությունները վերջապես հասկացան, որ հարկավոր է էլ ավելի կոշտ սահմանափակումներ մտցնել ցանցում: Սկզբում արգելափակում էին մեկ այս, մեկ այն կայքը և դրան բավական անփույթ էին վերաբերվում. ակնհայտ էր, որ չկա ֆիլտրմանն ուղղված համակարգային մոտեցում: Այսպես, օրինակ, *Youtube* պաշտոնական բլոգի տվյալներով՝ արդեն հունիսի 16-ին Իրանից տրաֆիկը կրճատվեց 10%-ով: Եվ այնուամենայնիվ, կայքն ամբողջությամբ փակել չկարողացան: Հատուկ ծառայություններին հաջողվեց արգելափակել արբանյակային հեռուստատեսության ալիքները: Անգամ դրանով իսկ ինտերնետը շարունակում էր աշխատել, չնայած այն բանին, որ ցանցն արգելափակելը շատ ավելի հեշտ խնդիր է: Կամ հատուկ ծառայությունները վատ էին համակարգում գործողությունները, կամ էլ իշխանությունները սկզբում թերագնահատել էին ինտերնետի իրական ազդեցությունն իրադարձությունների վրա: Դրա համար էլ արգելափակումը կատարվում էր փուլ առ փուլ և ընդհատումներով, մինչև որ հունիսի 21-22-ին վերածվեց գրեթե համընդհանուր արգելափակման:

Իրանական իշխանությունները չկարողացան ամբողջովին արգելափակել ինտերնետը: Ինտերնետի արգելափակումը մինչ օրս չի հանգեցրել լուրջ արդյունքների այն դեպքում, երբ օգտվողները ցանկություն ունեն շրջանցել արգելքը: Իրանցիների մեջ տարածում գտան ինտերնետ-կապի ֆիլտրումը շրջանցելու հնարավոր տարբերակների ուղեցույցներ: Բացի այդ, ընդդիմության համակիր արտասահմանցի օգտվողները դիտավորյալ ցանցում սկսեցին ի հայտ գալ որպես Իրանի բնակիչներ, որպեսզի մոլորության մեջ գցեն իրանական հատուկ ծառայություններին, որոնք ջանում էին գտնել ակտիվ օգտվողներին՝ նրանց չեզոքացնելու համար:

## *Հետևություններ Հայաստանի համար*

Հայաստանի համար ակնհայտ է դառնում արտակարգ իրավիճակների համար տեղեկատվական պլանի ստեղծման անհրաժեշտությունը: Հաղորդակցային միջոցների զարգացումը որակապես փոխում է սցենարները: Արժե հաշվի առնել նաև այս ոլորտի դինամիկ փոփոխությունները, որոնք թելադրում են ինչպես ռազմավարական, այնպես էլ մարտավարական մշակումների պարբերական վերանայման անհրաժեշտությունը: Ակնհայտ է, որ Ադրբեջանի հետ ռազմական (կամ այլ երկրի հետ քաղաքական) հակամարտություն սկսվելու դեպքում Հայաստանի մեդիա-դաշտն անհապաղ գրոհների կենթարկվի, որոնց նպատակը կլինի հանրապետության տեղեկատվական ցանցը շարքից դուրս բերելը: Գրոհների կենթարկվեն ինտերնետ պորտալներն ու ցանցերը, Ադրբե-

ջանի ռադիոէլեկտրոնային պայքարի ուժերը կջանան ճնշել Հայաստանի հեռարձակման հաճախականությունները:

Գրեթե անհնար է լիովին ճնշել տեղեկատվական դաշտը, մանավանդ Ադրբեջանի կողմից, որը համապատասխան կադրեր ու հզորություններ չունի: Սակայն էական սահմանափակումներն այս ոլորտում կարող են հանգեցնել կորուստների տեղեկատվական ճակատում:

Միևնույն ժամանակ, տեղեկատվական ցանցերի վրա իրականացվող գրոհներն առաջ են բերում մամուլի և երրորդ երկրների բնակիչների հետաքրքրությունը: Նոր հաղորդակցային միջոցների օգտագործումը և դրանց գերակայությունն ինտերնետում ստեղծվող հոսքերում կարող են հնարավորություն տալ ստեղծելու ոչ միայն պահուստային տեղեկատվական դաշտ: Նման հոսքերը հնարավորություն են ընձեռում ստեղծել ակտիվ տեղեկատվական խմբեր, որոնք վերջին հաշվով որոշակի նշանակալի ազդեցություն ունեն համաշխարհային մամուլի վրա: Համապատասխանաբար, ծայրահեղ պայմաններում ավանդականներին զուգահեռ այլընտրանքային տեղեկատվական հոսքերի ստեղծումը հնարավորություն կտա հակառակորդի միջոցների նկատմամբ գերիշխանություն հաստատելու ծրագիր իրականացնել:

Այս առումով, նույնքան էական է համարվում զուգահեռ տեղեկատվական աղմուկի և ապատեղեկացնող ալիքների ստեղծման հնարավորությունը, որոնք կարող են խափանել հակառակորդի նմանատիպ գործողությունները ցանցերում: Նման համալիր միջոցառումների իրականացումը, որոնք նախապես պետք է մշակված լինեն, թույլ կտա ծայրահեղ արագ ժամանակաընթացքում հակառակորդի նկատմամբ գերազանցության հասնել տեղեկատվական դաշտում:

# ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԿ-ՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

*Խաչատուր Դադայան*

Համաձայն փորձագիտական տվյալների, Ռուսաստանում բնակվում է ավելի քան 3 մլն ադրբեջանցի, որից շուրջ 1 միլիոնը՝ Մոսկվայում։

Ռուսաստանաբնակ ադրբեջանցիների զգալի մասը (հատկապես կարող ուժերը՝ բիզնեսի ներկայացուցիչները, մտավորականությունն ու երիտասարդությունը) ակտիվորեն ներգրավված է համառուսաստանյան մի շարք կառույցների մեջ։ Թեպետ վերջիններս ստեղծվել ու գործում են Ռուսաստանի օրենսդրությանը համապատասխան (գրեթե բոլորի հիմնադիր փաստաթղթերում այսպիսի կետ կա. «Աջակցել ժողովուրդների միջև խաղաղության, բարեկամության, վստահության և փոխըմբռնման ամրապնդմանը, ազգային, կրոնական և միջազգային կազմակերպությունների համախմբմանը»), սակայն դրանց գործունեության հիմնական ուղղվածությունը, որն ուղղորդվում է պաշտոնական Բաքվի կողմից, հակահայկականությունն է և ԼՂՀ-ի շուրջ պատերազմի արդյունքների ռևանշիստական վերանայումը։

Ստորև ներկայացնում ենք Ռուսաստանում ադրբեջանական որոշ ցանցային կառույցների բնութագիրը։

### *Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրես - Всероссийский азербайджанский конгресс (ВАК)*

Ստեղծվել է 2001թ. մարտին և այսօր ընդգրկում է ադրբեջանական 70 հասարակական կազմակերպություն, որոնք գործում են ՌԴ 68 սուբյեկտներում։ Նախագահն է Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր, մանկական օնկոլոգիայի ու հեմատոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, ՌԴ պետական մրցանակի դափնեկիր Մ.Ալիևը։

*ВАК-ը* ադրբեջանական սփյուռքի ամենահեղինակավոր և ծանրակշիռ կազմակերպությունն է, որտեղ մեկտեղված են առավել կարող անձինք։ Կոնգրեսի բարձրագույն ղեկավար մարմինը 158 հոգուց բաղկացած Կենտրոնական խորհուրդն է, որի կազմում կան նաև ոչ ադրբեջանցիներ։ Մասնավորապես, Ռուս-ադրբեջանական բարեկամության ընկերության նախագահ Ն.Բայբակովը և նրա տեղակալ Ա.Ռոմաշինը, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Մ.Գուսմանը (նաև ՀԱԿ-ի փոխնախագահներից է) և նրա եղ-

բայր, կինոռեժիսոր Յու. Գուսմանը, ՌԴ Փաստաբանների գիլդիայի փոխնախագահ Վ.Իգոնինը (նաև *ԲԱԿ-ի* փոխնախագահներից է և իրականացնում է կազմակերպության իրավական աջակցությունը), բիզնեսմեն Վ.Կոլեսնիկովը:

Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ կոնգրեսում լայնորեն ընդգրկված են ադրբեջանական բիզնեսի ներկայացուցիչները: Կենտրոնական խորհրդում նրանք 67-ն են, իսկ նախագահությունում՝ 34-ից 12-ը:

Նախագահից բացի, նախագահությունն ունի մեկ առաջին փոխնախագահ, մյուսները փոխնախագահներ են: Առաջին փոխնախագահն է «ԼՈՒԿՕՅԼ» նավթային ընկերության նախագահ Վ.Ալեքպերովը, որի ունեցվածքը, ըստ «Ֆորբս» հանդեսի, 2009թ. սկզբին կազմել է $7,8 մլրդ: Փոխնախագահներից է Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևի խնամին՝ «Կրոկուս ինթերնեյշընալ» ընկերության նախագահ, միլիոնատեր Ա.Աղալարովը: Փոխնախագահ է նաև *ԱՍՏ* ընկերության նախագահ, Չերկիզովոյի շուկայի սեփականատեր, Ռուսաստանում խոշոր մաքսանենգի համբավ ունեցող Թ.Իսմայիլովը, որը ս.թ. հունիսի սկզբին թուրքական Անթալիա ծովափնյա քաղաքում $1 մլրդ 300 մլն ներդրում կատարելով բացել է Եվրոպայի ամենաթանկ հյուրանոցը՝ «Մարդան փելեսը»:

Այս մարդիկ հարցազրույցներում չեն թաքցնում, որ կոնգրեսը և մյուս ադրբեջանական կառույցները գործում են իրենց շռայլ ֆինանսական օժանդակության շնորհիվ:

*ԲԱԿ-ի* աջակցությամբ Մոսկվայում գործում է Ռ.Իբրահիմբեկովի «ԻԲՌՈՒՍ» թատրոնը, որը ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով ներկայացնում է բեմադրություններ:

2006-ից կոնգրեսը հրատարակում է *«Азербайджанский конгресс»* թերթը, որը զգալի տեղ է հատկացնում Բաքվի պաշտոնական դիրքորոշումներին, այդ թվում և անշուշտ՝ հակահայկականությանը:

## *Ռուսաստանի ադրբեջանցիների դաշնային ազգային-մշակութային ինքնավարություն - Федеральная национально-культурная автономия азербайджанцев России (ФНКА АЗЕРРОС)*

Ստեղծվել է 1999թ. հոկտեմբերին: Հիմնադիրներն են Մոսկվայի, Տվերի, Յարոսլավլի, Կոստրոմայի, Սանկտ Պետերբուրգի, Կոմի Հանրապետության ազգային-մշակութային կազմակերպությունները: Կազմակերպության նախագահն է Ս.Սադիկովը, որն ունի երեք տեղակալ. ուշագրավ է, որ նախագահը և նրա տեղակալները ծնունդով Վրաստանից են:

Նախագահությունից բացի, կազմակերպությունն ունի 45 հոգուց բաղկացած դաշնային խորհուրդ (նախագահ՝ Ի.Ահմեդով): Թեպետ ղեկավար կազմում կան մտավորականության ներկայացուցիչներ, այդուհանդերձ, գերակշիռ մասը՝ 23 հոգի, զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ, այ-

սինքն՝ ֆինանսավորման խնդիրը հիմնավորապես լուծված է։

*ՓՆԿԱ ԱԶԵՐՐՈՍ–ը* ունի լուրջ տեղեկատվական ռեսուրսներ. նրա հովանու ներքո գործում է *«Медиа-холдинг»* ԲԲԸ, որը հրատարակում է *«Азеррос»* և *«Я – гражданин»* թերթերը, *«Вестник XXI века»* ամսագիրը և *«Азеррос»* տեղեկատվական-վերլուծական ինտերնետ պորտալը։

Չնայած կազմակերպության կանոնադրության 1.4 կետում ասված է, որ *«ՓՆԿԱ ԱԶԵՐՐՈՍ»-ը* մերժում է բռնության ցանկացած կիրառում ու քարոզչություն, ազգային, ռասայական ու կրոնական գժտության բորբոքում», սակայն վերոհիշյալ տեղեկատվական միջոցները լի են հակահայ նյութերով։

## *Ադրբեջանական երիտասարդության համակարգող խորհուրդ - Координационный совет азербайджанской молодежи (КСАМ)*

Այս կազմակերպության ոչ մի հիմնադիր փաստաթուղթ չի հաջողվել հայթայթել, սակայն *КСАМ–ը* Մոսկվայում աչքի է ընկնում ակնհայտ ծայրահեղականությամբ, անսքող հակահայ ագրեսիվությամբ և խուլիգանական սադրանքներով։

Ուշագրավ է կազմակերպության առաջնորդ, 41-ամյա Սիյավուշ Մամեդովի կերպարը։ Սա պաշտոնապես «Մարս-թրևլ» զբոսաշրջային ընկերության ֆինանսական տնօրենն է, սակայն գործունեության հիմնական ոլորտը ՀՀ, ԼՂՀ և Հայության դեմ ակտիվ պայքար մղելն է։ Մասնավորապես, Հայության հիմնախնդիրներով զբաղվող *«R-club»* միջազգային վերլուծական ցանցի[1] մոսկովյան բյուրոյի տնօրենն է։

2006թ. մայիսի 13-ին Ս.Մամեդովը և նրա կամակատարները սադրանքային բնույթի պաստառներով ու բացականչություններով փորձել են խանգարել Մոսկվայի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ԼՂՀ տուրիզմին նվիրված հանդիսությունը։

2006թ. դեկտեմբերի 4-ին Մոսկվայի Երաժշտության տանը կայացած «Արցախի ձայներ» խմբի համերգը տապալելու փորձի համար Ս.Մամեդովը, Ռ.Աղաևը և Օ.Շարիֆովը ձերբակալվել են, դատարանի կողմից մեղավոր ճանաչվել և պատասխանատվության ենթարկվել ՌԴ վարչական օրենսդրությունը խախտելու համար։

2007թ. մայիսի 1-ին, Ս.Մամեդովի հրահրմամբ, Մոսկվայի Ժողովուրդների բարեկամության ռուսաստանյան համալսարանի *(РУДН)* տարածքում տեղի է ունեցել ադրբեջանցի ու հայ երիտասարդների խոշոր ծեծկռտուք, որին երկու կողմից մասնակցել է շուրջ 100 հոգի։ Արդյունքում՝ նրանցից մեկը հայտնվել է հիվանդանոցում, բայց ԱԵՀԽ-ի նախագահն այս իրադարձությունն օգտագործել է հակահայ նոր հիստերիա սանձազերծելու համար։

[1] Այս ցանցն ընդգրկում է Բաքվի, Թբիլիսիի, Բուդապեշտի, Թել Ավիվի, Հաագայի ու Մոսկվայի մասնաճյուղերը, ունի 1128 փորձագետ և գործում է Ադրբեջանի ԳԱԱ մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտի ուղղորդմամբ։

## *Ռուսաստանի ադրբեջանական երիտասարդական կազմակերպություն-Азербайджанская молодежная организация России (АМОР)*

Կազմակերպությունը հիմնվել է 2009թ. ապրիլի 18-ին: Ղեկավարն է Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևի ավագ դուստր Լեյլան: Վերջինս 2006թ. ամուսնացել է ՀԱԿ փոխնախագահ Ա.Աղալարովի որդի Էմինի հետ, ունի 2 երեխա, մշտապես ապրում է Մոսկվայում, ուսանում է *МГИМО-ի* մագիստրատուրայում, նույն բուհի ադրբեջանական երիտասարդական ակումբի նախագահն է: Իր պապ Հեյդար Ալիևի հիմնադրամի ռուսաստանյան ներկայացուցչության ղեկավարն է, միաժամանակ *«Баку»* ամսագրի գլխավոր խմբագիրը:

*АМОР-ի* հիմնադիր ժողովում Լ.Ալիևան հայտարարել է. «Դժբախտաբար, մեր երկրի առջև դեռևս ծառացած են չլուծված հիմնախնդիրներ: Եվ դրանցից ամենամեծը հայ-ադրբեջանական, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն է, ինչի արդյունքում մեր տարածքի 20 տոկոսը բռնազավթված է: Երկրում կան մեկ միլիոն փախստականներ ու տեղահանվածներ: Ադրբեջանի ղեկավարությունը և մեր ժողովուրդը քանիցս ընդգծել են, որ հակամարտության խաղաղ կարգավորման կողմնակիցներ են՝ միջազգային իրավունքի հիման վրա և Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում:

Ըստ փաստաթղթերի, ՌԱԵԿ-ը մասնաճյուղեր ունի Ռուսաստանի 71 սուբյեկտներում:

# ԻՍՐԱՅԵԼԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ

*Արտակ Գրիգորյան*

*Մինչև բոլորովին վերջերս ԱՊՀ և մասնավորապես Հարավային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի երկրները չեն դիտարկվել որպես Իսրայելի արտաքին քաղաքականության գերակա ուղղություններ: ԽՍՀՄ փլուզումից և նախկին միութենական հանրապետությունների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո, շուրջ 17-18 տարի անց միայն Իսրայելի արտաքին գործերի նախարարությունն իր համակարգում ստեղծեց պրոֆիլային ստորաբաժանումներ, որոնք սկսած 2009թ. հունվարից՝ ուղղորդված կերպով զբաղվելու են Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ տարվող աշխատանքներով:*

## *Վերակազմավորումներ Իսրայելի արտաքին գործերի նախարարությունում*

Մինչ վերոհիշյալ ստորաբաժանումների ստեղծումը, ԱՊՀ երկրների հետ աշխատանքային ուղղությունը գտնվում էր ԱԳՆ Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի դեպարտամենտի իրավասության ներքո, որի աշխատանքները համակարգում էր Իսրայելի արտաքին քաղաքական գերատեսչության ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ ԱԳՆ գլխավոր տնօրենի[1] տեղակալ Փինհաս Ավիվին: Վերոհիշյալ դեպարտամենտի կազմում նախկինում գործում էին երկու առանձին բաժանմունքներ՝ Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի: Վերջին ստորաբաժանումը՝ նախկին խորհրդային քաղաքացի Հարի Կորենի գլխավորությամբ, զբաղվում էր այսպես ասած հետխորհրդային տարածության երկրներով՝ բնականաբար հիմնական շեշտադրումը կատարելով նախկին ԽՍՀՄ եվրոպական մասի երկրների վրա: Սակայն իր աշխատակազմում ընդամենը չորս հաստիքի տիրապետող վերոհիշյալ կազմավո-

[1] Իսրայելում նախարարության գլխավոր տնօրենը մոտավորապես նույն պաշտոնն է, ինչ մեզանում աշխատակազմի ղեկավարը:

րումը, բնականաբար, ի վիճակի չէր վերջին տարիներին ակտիվացող հարաբերությունների ֆոնին ամբողջությամբ ապահովել աստիճանաբար աճող աշխատանքային ողջ ծավալը ԱՊՀ և մասնավորապես՝ Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ տարվող աշխատանքներում: Եթե 90-ական թթ. վերոհիշյալ ստորաբաժանման գործունեության հիմնական ուղղությունը Ռուսաստանի Դաշնությունն էր, ապա 2000-ական թթ. միջպետական փոխհարաբերություններն սկսեցին ինտենսիվորեն զարգանալ նաև Ուկրաինայի, Ղազախստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ: Դրան մեծապես նպաստում էր իսրայելյան բիզնեսի արագ տարածումն այդ երկրներում և ընդհանուր առմամբ միջպետական համագործակցությունն առևտրատնտեսական ոլորտներում, մասնավորապես՝ էներգետիկայի բնագավառում:

2008թ. կեսերին Իսրայելի արտաքին գործերի նախարարությունում որոշում կայացվեց ակտիվացնել փոխհարաբերությունները Հարավային Կովկասի և հատկապես Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների հետ, որոնց մինչ այդ առանձնակի կարևորություն չէր տրվում:

Դրան հաջորդող մի քանի ամիսների ընթացքում փոփոխվեցին ԱՊՀ երկրներում հավատարմագրված Իսրայելի գրեթե բոլոր դեսպանները: Մասնավորապես, փոխվեցին ԽՍՀՄ միջինասիական նախկին բոլոր հինգ երկրների, իսկ եվրոպական մասի պետություններից՝ Բելառուսի, Մոլդովայի և ՀՀ դեսպանները: Կադրային տեղաշարժեր տեղի ունեցան նաև ՌԴ և Ուկրաինայի դեսպանություններում: Աստանայում և Բիշքեկում դեսպան նշանակվեց ծնունդով ղազախստանցի Իսրայել Մեյ-Ամին, իսկ Տաշքենդում՝ Իսրայելի արտաքին գործերի նախարարի խորհրդական Հիլել Նյումանը: ՀՀ-ում, Թուրքմենստանում և Տաջիկստանում ոչ ռեզիդենտ դեսպան նշանակվեց Շեմի Ցուրը: 2008թ. հունիսին Իսրայելի արտգործնախարարի տեղակալ Մաջալի Ուահաբեն այցելեց Ղրղզստան և Ուզբեկստան: Այդ նույն ժամանակահատվածում ուրվագծվեց Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի առաջիկա այցը Ղազախստան, Ուզբեկստան և Ադրբեջան:

Շատ լավ գիտակցելով, որ նման սահմանափակ աշխատակազմով դեպարտամենտն ի զորու չէ իրականացնել նման մեծածավալ աշխատանքներ, Փինհաս Ավիվին բարձրացրեց վերջինիս վերակազմավորման հարցը: Հարցի մանրամասն քննարկումից հետո Իսրայելի արտգործնախարարությունում որոշում կայացվեց նախարարության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի դեպարտամենտի վերակազմավորման մասին, ինչն իրականացվեց 2008թ. տարեվերջին: Դրա արդյունքում վերոհիշյալ դեպարտամենտի Եվրասիայի բաժանմունքի փոխարեն ձևավորվեցին երկու նոր ստորաբաժանումներ՝ Եվրասիա-1 և Եվրասիա-2: Առաջինը՝ Եվրասիա-1-ը, զբաղվելու է ԽՍՀՄ եվրոպական մասի երկրներով, Եվրասիա-2-ը՝ Հարավային Կովկասի և Կենտ-

րոնական Ասիայի երկրներով: Այսինքն՝ Իսրայելի ԱԳՆ համակարգում ձևավորվեց նոր ստորաբաժանում, որը բացառապես զբաղվելու է Իսրայելի արտաքին քաղաքական գործունեության նոր գերակա ուղղություններ հանդիսացող վերոհիշյալ տարածաշրջանների երկրներով:

Հետաքրքրականն այն է, որ Իսրայելի ԱԳՆ-ում տեղի ունեցած այս իրադարձությունները, որոնք ենթադրում են դիվանագիտական ակտիվ գործընթացներ վերը նշված տարածաշրջաններում, կատարվեցին գրեթե աննկատ Իսրայելի մամուլի, քաղաքական և վերլուծական շրջանակների աչքից: Անգամ Իսրայելի ԱԳՆ կայքի՝ գերատեսչության կառուցվածքը ներկայացնող բաժնում այս ստորաբաժանումները դեռևս նշված չեն:

## *Ինչպիսի՞ կադրերով է Իսրայելը «արշավում» դեպի Հարավային Կովկաս և Կենտրոնական Ասիա*

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում վերոհիշյալ ստորաբաժանումների նոր կադրերով թարմացված ու համալրված աշխատակազմը:

Ինչպես և նախկինում, Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի դեպարտամենտը կղեկավարի Իսրայելի ԱԳՆ գլխավոր տնօրենի տեղակալ *Փինհաս Ավիվին,* որն այսօր համարվում է Իսրայելի դիվանագիտական կորպուսի վետերաններից ու բազմափորձ գործիչներից մեկը: Վերջինս, բացի եբրայերենից, տիրապետում է ևս հինգ լեզուների: Դիվանագիտական ծառայությունը սկսել է 1968-ից: Այդ ժամանակահատվածում դիվանագիտական աշխատանքներ է վարել չորս մայրցամաքների (Եվրոպա, Ասիա, Աֆրիկա, Լատինական Ամերիկա) մեկ տասնյակից ավելի երկրներում, այդ թվում նաև դեսպանի պաշտոններում: Իսրայելի ԱԳՆ աշխատակազմում իրար հետևից ղեկավարել է կենտրոնական ապարատի գրեթե բոլոր դեպարտամենտները: Մինչև ներկայիս պաշտոնին նշանակվելը՝ 2003-07թթ. եղել է Իսրայելի դեսպանը Թուրքիայում: Թուրքիայում կուտակած փորձը, հատկապես Կենտրոնական Ասիայի երկրների հետ տարվող աշխատանքներում (որոնք բոլորն էլ, բացի Տաջիկստանից, թուրքալեզու երկրներ են), գնահատվում է որպես կարևոր և խիստ օգտակար հանգամանք: Թեև Խորհրդային Միության «տարածքը» Փինհաս Ավիվիի համար «հարազատ» վայր չէ և նա չի տիրապետում ռուսերենին, սակայն դատելով գործընկերների, ինչպես նաև Իսրայելի արտաքին գերատեսչական այլ մարմինների արձագանքներից՝ վերջինս բավական արդյունավետ է դրսևորում իրեն այդ բնագավառում:

Թերևս, դրանում որոշակի ներդրում ունի նաև Փինհաս Ավիվիի՝ նախկին խորհրդային երկրների հարցերով «աջ ձեռք» համարվող, արդեն հիշատակված *Հարի Կորենը:* Վերջինս, ինչպես արդեն նշվեց, ծնվել է Խորհրդային Միությունում, ավելի ստույգ՝ Լատվիայում: Ռուսերենը նրա համար «մայրե-

նի» լեզու է, Իսրայել է հայրենադարձվել 1973թ.: Իսրայելի դիվանագիտական շրջանակներում հայտնված առաջին «ռուսներից» է: Որպես դիվանագետ Հարի Կորենը «աճել» է Խորհրդային Միության տարածաշրջանում և համարվում է այդ տարածաշրջանի, հատկապես ԽՍՀՄ եվրոպական մասի երկրների լավագույն գիտակներից մեկը: Բավական երկար ժամանակ աշխատել է Մոսկվայի դեսպանատանը, եղել Իսրայելի դեսպանը Լատվիայում և Լիտվայում: Երկու տարուց ավելի ղեկավարել է ԱԳՆ Եվրասիայի բաժինը, իսկ այնուհետև, վերակազմավորումից հետո՝ Եվրասիա-1 ստորաբաժանումը: Եվրասիա-1-ում Հարի Կորենի տեղակալներ են նշանակվել Օլգա Սլովը և Յակով Լիվնեն, որոնք դիվանագիտական աշխատանքներ են վարել հետխորհրդային մի շարք երկրների դեսպանություններում: Եվրասիա-1-ը այսօր միակ ստորաբաժանումն է Իսրայելի ողջ պետական համակարգում, որի ղեկավարը և բոլոր ենթակաները նախկին խորհրդային քաղաքացիներ են[2]:

Ի տարբերություն Եվրասիա 1-ի, Եվրասիա 2-ի աշխատակազմում, որի գործունեության տեսադաշտում ինչպես արդեն նշվեց, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներն են, ռուսալեզու մասնագետներ չկան, և ընդամենը մեկ հոգի՝ *Շեմի Յուրն* է, այն էլ ընդամենը մի քանի ամսով, որ դիվանագիտական աշխատանք է վարել ԱՊՀ տարածքում:

Եվրասիա-2-ի հիմնադրումը համընկավ Գազայի պատերազմական իրադարձություններին, իսկ այնուհետև սկսվեցին Կնեսետի նախընտրական գործընթացները: Այս պայմաններում Եվրասիա-2-ի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց նույն Շեմի Յուրը:

Ինչպես արդեն նշվեց, Շեմի Յուրը 2008թ. հունիսից զբաղեցնում է ՀՀ, Թուրքմենստանի և Տաջիկստանի ոչ ռեզիդենտ դեսպանի պաշտոնը (նստավայրը՝ Երուսաղեմ): Վերջինս թեև աչքի չի ընկնում հետխորհրդային երկրներում իրականացրած աշխատանքային մեծ փորձով, բայց, այնուամենայնիվ, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի ուղղությամբ աշխատանքային գործընթացների զարգացման առումով համարվում է բավական բանիմաց գործիչ: Շեմի Յուրի ծնողները թավրիզցիներ են, որոնք այնուհետև հայրենադարձվել են Էրեց-Իսրայել: 1981-83թթ. Յուրը զբաղեցրել է Իսրայելի հյուպատոսի պաշտոնը Թուրքիայում, իսկ 1995-2000թթ. եղել է Իսրայելի դեսպանը Կիպրոսում: Այդ ժամանակահատվածում Կիպրոսի նավահանգստային քաղաքներում խիստ աշխուժացավ Իսրայելի և արաբական երկրների միջև ոչ պաշտոնական առևտուրն ու ապրանքաշրջանառությունը, ինչի արդյունքում վեր-

[2] Նման ևս մեկ ստորաբաժանում գոյություն ունի ԱՄԱՆ-ի՝ Իսրայելի ռազմական հետախուզության համակարգում, որտեղ նախկին խորհրդային երկրներով զբաղվող պրոֆիլային ստորաբաժանման ողջ աշխատակազմը ևս նախկին խորհրդային քաղաքացիներ են:

ջինս հայտնվեց Իսրայելի մամուլի և քաղաքական ղեկավար շրջանակների ուշադրության կենտրոնում: 2003-07թթ. Շեմի Ցուրը զբաղեցրել է Ֆինլան-դիայում Իսրայելի դեսպանի և Էստոնիայում ոչ ռեզիդենտ դեսպանի պաշտոնները:

Ցուրը բավական վարժ տիրապետում է թուրքերենին և պարսկերենին, քաջ ծանոթ է նաև Թուրքիային ու Իրանին, որոնք էթնոքաղաքական, կրոնաքաղաքական և հոգևոր-մշակութային առումով այսպես թե այնպես ունեն բավական լուրջ ազդեցություն հիշյալ տարածաշրջաններում ընթացող զարգացումների վրա: Թուրքերենի և պարսկերենի իմացությունը Շեմի Ցուրին, անշուշտ, օգտակար կլինի Ադրբեջանի և որոշ առումով նաև Կենտրոնական Ասիայի թուրքալեզու երկրների, ինչպես նաև պարսկախոս Տաջիկստանի հետ շփումների ընթացքում: Բացի այդ, որքան մեզ հաջողվեց պարզել, Ցուրն ինտենսիվ ուսումնասիրում է նաև ռուսաց լեզուն՝ այն գործնականում օգտագործելու մտադրությամբ: Գործունեության ընթացքում վերջինս թեև կանոնավոր կերպով «չի զբաղվել» հետխորհրդային և մասնավորապես խնդրո առարկա տարածաշրջաններով, բայց, այնուամենայնիվ, նրան այստեղ այնքան էլ նորեկ չի կարելի համարել. նա արդեն հասցրել է այդ ուղղությամբ իր հետքը թողնել իսրայելյան դիվանագիտության պատմության մեջ: 1993թ. հենց Շեմի Ցուրը Ուզբեկստանում բացեց Իսրայելի դեսպանատունը՝ կարճ ժամանակահատված ղեկավարելով Իսրայելի դիվանագիտական առաքելությունն այդ երկրում:

Եվրասիա-2-ում Շեմի Ցուրի տեղակալ է նշանակվել Նաֆթալի Թամիրը, որը դիվանագիտական աշխատանքներ է վարել Տոկիոյում, Վաշինգտոնում, Ստրասբուրգում, Հելսինկիում (Ֆինլանդիայում Իսրայելի դեսպանի պաշտոնում) և այլն: Մինչև վերջին նշանակումը Թամիրը Իսրայելի դեսպանն էր Ավստրալիայում: Հետաքրքրական է այն, որ վերջինս 2007թ. այդ պաշտոնից ազատվել էր այն բանի համար, որ Իսրայելի հեղինակավոր «Հաարեց» թերթին տված հարցազրույցում նրա հնչեցրած մի քանի մտքեր Իսրայելի կառավարության կողմից որակվել էին որպես ռասիստական:

Ե՛վ Շեմի Ցուրը, և՛ Նաֆթալի Թամիրը, աշխատելով դեսպանների պաշտոններում, իրենց դրսևորել են որպես կայացած, սկզբունքային և հետևողական դիվանագետներ: Նրանք երկուսն էլ Իսրայելի քաղաքական և դիվանագիտական համակարգում գնահատվում են գործիչներ, որոնք ընդունակ են ինքնուրույն կայացնելու համարձակ ու պատասխանատու որոշումներ: Այդ առումով Եվրասիա-2-ի «հեղինակությունը» բավական բարձր է ոչ միայն Իսրայելի արտաքին քաղաքական համակարգում, այլև այդ համակարգի հետ ակտիվ շփումների մեջ գտնվող օտարերկրյա քաղաքական-դիվանագիտական շրջանակներում:

## *Առաջին գործընթացները Եվրասիա-2-ի հիմնադրումից հետո. լիբերմանյան արտաքին քաղաքականություն*

Գազայի պատերազմն իսկական փորձաքար հանդիսացավ նոր ձևավորվող Եվրասիա-2 կառույցի համար: Վերջինս հետխորհրդային տարածքի արտաքին քաղաքական գերատեսչությունների առջև պետք է կարողանար հանդես գալ լուրջ պարզաբանումներով և «բացատրական աշխատանքներով»: Թեև Ադրբեջանը Գազայի պատերազմի կապակցությամբ հանդես եկավ Իսրայելի դեմ ուղղված կոշտ հայտարարություններով, բայց դատելով այն հանգամանքից, որ Կենտրոնական Ասիայի իսլամական երկրները որդեգրեցին չեզոք և հավասարակշռված կեցվածք, բոլորովին չթուլացնելով և կասկածի տակ չդնելով Իսրայելի հետ ուրվագծվող համագործակցության տեմպերը, կարելի է եզրակացնել, որ Եվրասիա-2-ի առաջին փորձությունն այդ կապակցությամբ բարեհաջող ավարտվեց:

Ընթացիկ տարվա առաջին ամիսները Եվրասիա-2 ստորաբաժանման համար ինտենսիվ գործունեության ժամանակաշրջան էին: Այդ ժամանակահատվածում Շեմի Ցուրը երկու անգամ այցելեց ՀՀ, ինչպես նաև կենտրոնաասիական տարածաշրջանի երկրներ, մասնավորապես, Ղրղզստան և Թուրքմենստան: ՀՀ կատարած այցին մենք դեռ կանդրադառնանք: Իսկ ինչ վերաբերում է մարտ-ապրիլ ամիսներին Ղրղզստան և Թուրքմենստան կատարած այցելություններին, ապա վերոհիշյալ երկրներում մի շարք պաշտոնական հանդիպումներ ունենալուց հետո Շեմի Ցուրը Ղրղզստանում ներկա գտնվեց Իսրայելի նորանշանակ դեսպան Իսրայել Մեյ-Ամիի կողմից նախագահ Կուրմանբեկ Բակիևին հավատարմագրերի հանձնման արարողությանը, իսկ Թուրքմենստանում որպես ոչ ռեզիդենտ դեսպան արդեն ինքը հանձնեց հավատարմագրեր Թուրքմենստանի խորհրդարանի նախագահ Աղջա Նուրբերդիևին: Թուրքմենստանում անցկացված բանակցություններն ամենայն հավանականությամբ ընթացել են խիստ արդյունավետ, որովհետև մոտ 1-1,5 ամիս հետո իսրայելական մամուլում հաղորդագրություններ հրապարակվեցին Թուրքմենստանում իսրայելական դեսպանության բացման մասին: Այդ փաստը մեկնաբանվեց որպես իսրայելյան դիվանագիտության շատ կարևոր հաջողություն Կենտրոնական Ասիայում, ընդ որում՝ այնպիսի երկրում, որն Իրանի հետ ունի մոտ 1000 կմ երկարությամբ սահման:

Ս.թ. մարտի 31-ին Կնեսետի հատուկ նիստում տեղի ունեցավ Իսրայելի նոր կառավարության երդման արարողությունը: Կառավարության կազմում Իսրայելի արտաքին գործերի նախարար նշանակվեց «Մեր տունն Իսրայելն է» կուսակցության ղեկավար Ավիգդոր Լիբերմանը: Վերջինս, Իսրայելի քաղաքական դաշտում հանդես գալով որպես աջ արմատական գործիչ, արտաքին քաղաքականության կառուցման գործընթացում միանշանակ հանդես է գալիս ԱՊՀ երկրների հետ հարաբերությունների սերտացման, ջերմացման և ակտիվ

փոխհամագործակցության օգտին: Այնպես որ, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններում ընթացող զարգացումները, պայմանավորված Իսրայելի արտաքին քաղաքականության նոր գերակա ուղղություններ հանդիսանալու հանգամանքով, լիովին համապատասխանում էին Ա.Լիբերմանի քաղաքական կողմնորոշումներին:

Արտգործնախարարի պաշտոնը ստանձնելուց հետո Լիբերմանը շատ արագ և հստակ ձևակերպեց կառավարության արտաքին քաղաքականության հետևյալ գերակա ուղղությունները՝ արտաքին քաղաքական հարթության մեջ ուժգին ճնշման գործադրում Իրանի վրա, Պաղեստինի հետ բանակցային գործընթացների սկզբունքների վերանայում և բազմավեկտորային արտաքին քաղաքականություն, մասնավորապես ԱՊՀ երկրների՝ Ռուսաստանի և հատկապես կենտրոնաասիական պետությունների հետ հարաբերությունների խորացում և ամրապնդում: Այդ կապակցությամբ Լիբերմանի կողմից կարևորագույն խնդիր դիտարկվեց Ռուսաստանի և վերոհիշյալ տարածաշրջանների երկրների հետ քաղաքական երկխոսության ձևավորումը և ուժերի կենտրոնացումը առևտրի, տնտեսության և տուրիզմի բնագավառներում համագործակցության զարգացման ուղղությամբ:

Պաշտոնական պարտականությունները ստանձնելուց հետո առաջին շաբաթների ընթացքում Լիբերմանի կողմից կատարվեցին երկու ուշագրավ կադրային նշանակումներ: Իսրայելի արտաքին գործերի նախարարության գլխավոր տնօրեն նշանակվեց *Յոսի Գալը,* որը մինչ այդ գլխավոր տնօրենի տեղակալն էր և համարվում էր «հին կաթսայի» գործիչներից: Մասնակիորեն թարմացված ու նորացված արտգործնախարարության աշխատակազմում հին սերնդի գործչի նշանակումը գլխավոր տնօրենի պաշտոնում դրական արձագանքներ առաջ բերեց իսրայելյան ողջ դիվանագիտական ծառայության համակարգում: Բավական ուշագրավ էր Լիբերմանի երկրորդ նշանակումը: Առաջին անգամ Իսրայելի պատմության ընթացքում նշանակվեց արտգործնախարարի խորհրդական ԱՊՀ երկրների գծով: Այդ պաշտոնում նշանակվեց նախկին խորհրդային քաղաքացի, ծնունդով Մինսկից *Զեէվ Բեն-Արիեն* (Վլադիմիր Ֆլանչիկ): Նա հիանալի տիրապետում է ռուսերենին, 16 տարի աշխատել է Իսրայելի դիվանագիտական համակարգում և այդ ողջ ժամանակահատվածում աշխատել է բացառապես ԱՊՀ երկրներում: Եղել է Իսրայելի դեսպանը Բելառուսում, աշխատել է նաև Ռուսաստանի և Ուկրաինայի դեսպանատներում: Վերջին տարիներին գործունեությունն առավելապես կենտրոնացրել է Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի ուղղությամբ, մասնավորապես, Եվրասիա-2-ի հիմնադրումից հետո մինչև վերոհիշյալ նշանակումը մի քանի ամիս աշխատում էր այդ ստորաբաժանումում: Այս նշանակումը ևս մեկ անգամ հաստատում է, որ ԱՊՀ տարածքը գտնվում է Իսրայելի արտաքին քաղաքական գործունեության կիզակետում:

## *Ի՞նչ խնդիրներ է հետամտում Իսրայելը Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում*

Ակտիվացնելով գործունեությունը Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում՝ Իսրայելը հետամտում է մի քանի հստակ և կոնկրետ նպատակներ:

Առաջին. Իսրայելի համար կարևորագույն հարցերից մեկը այսպես կոչված «իրանական գերխնդիրն է»: Իսրայելն իր արտաքին քաղաքական հայեցակարգը կառուցելիս ելնում է իր համար աքսիոմատիկ այն դրույթից, որ իրանական միջուկային սպառնալիքը հարյուր տոկոսանոց իրողություն է, և որի թիվ 1 թիրախը Իսրայելն է: Իրանի միջուկային սպառնալիքի չեզոքացումը Իսրայելը դիտարկում է որպես իր արտաքին քաղաքականության գերխնդիրներից մեկը: Ընդ որում՝ վերոհիշյալ խնդրի հանգուցալուծման կապակցությամբ Իսրայելի փորձագիտական կենտրոնները, հատուկ ծառայություններն ու պետական, պաշտոնական իրավասու շրջանակները գտնում են, որ իրանական ագրեսիային դիմակայելու դիվանագիտական զինանոցը դեռևս սպառված չէ:

Այսպես՝ ս.թ. մայիսին Թել-Ավիվի համալսարանի իրանական հետազոտությունների կենտրոնի կողմից կազմակերպված խորհրդաժողովի ժամանակ, որին մասնակցում էր նաև Իսրայելի գրեթե ողջ քաղաքական էլիտան, Իսրայելի ռազմական հետախուզության նախկին պետ Զեէվի Ֆարկաշը հայտարարեց, որ «Իրանը շրջապատող չափավոր սուննիական երկրների հետ (որոնք նույնպես զգուշանում են իրանական միջուկային սպառնալիքից) կոալիցիայի ձևավորումն ունի անչափ կարևոր նշանակություն»: Այդ երկրների ցանկում մատնանշվեցին Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրները:

Նույն խորհրդաժողովում իրանական հետազոտությունների վերոհիշյալ կենտրոնի տնօրենի տեղակալ, իսրայելյան հայտնի իրանագետ Ուզի Ռաբին շեշտեց, որ Իրանը շրջապատող աշխարհում Իսրայելն ամեն գնով պետք է դիվանագիտական բավական մեծ ակտիվություն դրսևորի: Վերջինս միաժամանակ մատնանշեց, որ «…իրանական ագրեսիային դիմակայելու համար տարածաշրջանում հարկավոր է ձևավորել մի քանի կոալիցիոն միավորումներ»:

Իսրայելի ԱԳՆ նորանշանակ գլխավոր տնօրեն Յոսի Գալը դեռևս ս.թ. փետրվարին Հերցլիայի միջդիսցիպլինար կենտրոնի 9-րդ կոնֆերանսում Իրանի կապակցությամբ պատրաստած իր զեկույցում Իրանի կողմից շրջակա երկրներում հանդես բերվող դիվանագիտական գործողություններին, այդ թվում նաև ոչ դիվանագիտական խողովակներով իրականացվող միջամտություններին հետևելու և համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու հարցը դիտարկում է որպես Իսրայելի արտաքին քաղաքական գերատեսչության գործունեության կարևորագույն խնդիրներից մեկը:

«Հարկավոր է հասկացնել Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներին, որ Իսրայելն ավելի շատ բան կարող է տալ իրենց, քան Իրանը»,- հայտարարել է Իսրայելի ԱԳՆ մեկ այլ պատասխանատու աշխատող:

Այդ իսկ պատճառով բոլորովին պատահական չէ, որ Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի այցը տարածաշրջան շատերի կողմից ընկալվեց որպես աշխարհաքաղաքական հարթության մեջ կատարված քայլ: Այդ այցելությանը նախորդող ժամանակահատվածում միանգամայն տրամաբանորեն ենթադրվում էր, որ նախկին ԽՍՀՄ երկրների կողմից Իսրայելի նախագահի բարձր մակարդակով ընդունելությունը կարող է բացասաբար ընկալվել Իրանի և Իսրայելի հետ հակամարտության մեջ գտնվող արաբական աշխարհի կողմից: Իսրայելն իր հերթին այդ շրջայցն ընկալում էր որպես Ադրբեջանի, Ղազախստանի և Ուզբեկստանի կողմից Իսրայելի հետ հարաբերությունների ակտիվացման պատրաստակամության բարոմետր:

Երկրորդ. Իսրայելում ցանկանում են կոնկրետ երկրների, տվյալ դեպքում՝ Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի մուսուլմանական երկրների օրինակով ցույց տալ իսլամական և հատկապես արաբական աշխարհին, որ Իսրայելի և մուսուլմանական երկրների միջև բարեկամական փոխհարաբերություններ ու համագործակցություն միանգամայն հնարավոր է: Եվ որ այդ համագործակցությունից ցանկացած երկիր, այդ թվում նաև իսլամական երկրները, միանշանակ շահեկան վիճակում են հայտնվելու: Դրանով իսկ հրեական պետությունը ձգտում է ապացուցել, որ Իսրայել-իսլամական աշխարհ կամ հրեաներ-մուսուլմաններ հակամարտություն, որպես այդպիսին, իրականում գոյություն չունի, իսկ եթե անգամ ունի, ապա ոչ իր մեղքով: Այդ գործընթացում քաղաքական երկխոսությունը զարգացնելու և ամրապնդելու հետ մեկտեղ, Իսրայելը հատուկ ուշադրություն է բևեռում հատկապես տնտեսական ոլորտում նախատեսվող համագործակցությանը: Իսրայելում վերջին ամիսներին բավական հաճախակի են մատնանշում Ադրբեջանի հետ նախորդ 2-3 տարվա ընթացքում խորացող համագործակցության փորձը, որին ներկա պահին նախկին ԽՍՀՄ մուսուլմանական երկրների շարքում կարելի է համարել Իսրայելի հետ ռազմավարական համագործակցության ուղին բռնած, թերևս, ամենաառաջին դիրքում գտնվող երկիրը:

Երրորդ. Հարավկովկասյան և կենտրոնաասիական տարածաշրջանում Իսրայելի ակտիվացումը, կարծում ենք, պայմանավորված է ևս մեկ, առայժմ չնկատվող գործոնով: Դա Թուրքիայի գործոնն է:

Չնայած վերջին ժամանակահատվածում Իսրայելի և Թուրքիայի փոխհարաբերություններում ի հայտ եկած սառնությանը, ռազմավարական համագործակցությունը երկու երկրների միջև, այնուամենայնիվ, նույն տեմպերով շարունակվում է: Սակայն ակնհայտ է, որ Իսրայելին այսօր ինչ-որ մի բան

այլևս չի բավարարում: Այսօր տարածաշրջանում և ընդհանուր առմամբ աշխարհում գործում են ավելի բարդ խաղի կանոններ, քան գոյություն ունեին 10-15 տարի առաջ: Իսրայելի և Թուրքիայի միջև տասնամյակներ շարունակ գոյություն ունեցող ռազմավարական դաշինքը պատասխաններ է տվել աշխարհաքաղաքական բազմաթիվ հարցադրումների՝ ենթադրելով տարածաշրջանային զարգացումների որոշակի սցենարներ, որոնք լիովին բավարարել են երկու երկրներին: Սակայն վերջին 10-15 տարվա ընթացքում արագ փոփոխվող աշխարհում աստիճանաբար ի հայտ են եկել բազմաթիվ նոր հարցադրումներ, որոնց վերոհիշյալ դաշինքը շատ հաճախ ի զորու չէ լուծումներ առաջադրել: Այս պայմաններում թե՛ Թուրքիան և թե՛ Իսրայելը ստիպված են փնտրել իրենց համար կենսական հետաքրքրություն ներկայացնող որոշ հարցադրումների ուրույն, շատ հաճախ՝ տվյալ ռազմավարական համագործակցության տրամաբանությանը հակասող լուծումներ: Եվս մեկ անգամ շեշտում ենք, որ սա ամենևին չի նշանակում, թե Իսրայելի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերությունն այլևս մայրամուտ է ապրում, որովհետև դա, համենայնդեպս, արդեն տասնամյակներով թրծված և կայացած համագործակցություն է, և այսօր էլ բազմաթիվ ոլորտներում կենսական նշանակություն ունի երկու երկրների համար:

Երկար ժամանակ Թուրքիան Իսրայելի համար հանդիսացել է համագործակցության այն մոդելը, որը կարող է գոյություն ունենալ հրեական պետության և մուսուլմանական աշխարհիկ պետությունների միջև, ի հակակշիռ արմատական իսլամական երկրների, մասնավորապես՝ Իրանի: Համագործակցության այս մոդելը բավարարել է նաև Արևմուտքին և ողջ միջազգային հանրությանը, որոնք իրենց հերթին խրախուսել և աշխարհաքաղաքական դրական մթնոլորտ են ստեղծել վերոհիշյալ գործընկերության շուրջ: Աշխարհիկ Թուրքիան, որն Իսրայելի հետ համագործակցության համար հանդիսացել է բաց երկիր, ի տարբերություն Իրանի՝ ծառայել է որպես առաջադեմ և մոդեռնիզացվող հասարակությանը բնորոշ պետականության մոդելի օրինակ: Սակայն ներկա պահին Թուրքիան կարծես թե չի բավարարում ոչ մեկ և ոչ էլ մյուս չափանիշներին: Համենայնդեպս, արդեն սկսում են այդպես մտածել Իսրայելում: Այդ առումով որպես այլընտրանք, ինչպես արդեն վերը նշվեց, լիովին կարող են հանդես գալ կենտրոնաասիական պետությունները և առաջին հերթին՝ Ուզբեկստանն ու Ղազախստանը: Թեև նրանք երկուսն էլ զիջում են Թուրքիային իրենց տնտեսական ցուցանիշներով, բայց բնակչության գումարային թվաքանակով, աշխարհաքաղաքական դիրքավորմամբ, նավթի և գազի արդյունահանման և տարանցման իրենց պոտենցիալ հնարավորություններով աշխարհաքաղաքական տեսանկյունից կարող են հանդես բերել ոչ պակաս կարևոր դերակատարություն, քան այսօր ունի Թուրքիան:

Այլևս հասկանալի է, թե ինչու Շիմոն Պերեսի այցը Հարավային Կովկաս և Կենտրոնական Ասիա Իսրայելի համար ուներ այդքան կենսական նշանակություն: Չանդրադառնալով վերոհիշյալ այցելության մանրամասներին, ինչն անպայման կանենք առաջիկայում, նշենք, որ այդքան երկար ժամանակ խնամքով նախապատրաստվող այցելությունը, որն, ի դեպ, տեղի ունեցավ նախատեսված երեք պետություններից երկուսում[3], Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի՝ որպես Իսրայելի արտաքին քաղաքականության նոր գերակա ուղղությունների, պերճախոս վկայությունն է:

## *ՀՀ-ն Իսրայելի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում*

Այս պայմաններում մեծ հետաքրքրություն է առաջացնում ՀՀ-ին «հատկացվող դերակատարությունը»: ՀՀ-ն, իհարկե, մուսուլմանական երկիր չէ, բայց Հարավային Կովկասում ունի առանցքային դերակատարություն: Բացի այդ, ՀՀ-ն Իրանի հետ ունի 35 կմ երկարությամբ սահման և բարեկամական փոխհարաբերություններ: Միաժամանակ, ՀՀ-ն Իսրայելի ռազմավարական գործընկերներ Ադրբեջանի և Թուրքիայի հետ գտնվում է՝ առաջինի հետ ռազմական հակամարտության, իսկ երկրորդի հետ՝ բարդ և պատմականորեն կնճռոտ փոխհարաբերությունների հորձանուտում:

ՀՀ նկատմամբ ցուցաբերվող ակտիվությունը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է նաև Իսրայել-Թուրքիա հարաբերություններում ի հայտ եկած որոշակի սառնությամբ: Այսպես՝ Դավոսյան համաժողովում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի և Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի միջև տեղի ունեցած հայտնի միջադեպից անմիջապես հետո իսրայելյան հեղինակավոր «Մաարիվ» թերթը գրեց, որ «Իսրայելի արտաքին գործերի նախարարության կողմից հանկարծակի սկսել են սպառնալիքներ հնչել Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության հնարավոր ճանաչման մասին»: Եվ դա այն դեպքում, երբ մինչև բոլորովին վերջերս այդ թեմայի վրա թաբու էր դրված՝ Թուրքիայի հետ հարաբերությունները չփչացնելու մտահոգությամբ: Հատկանշական է նաև այն, որ Շեմի Ցուրի ՀՀ կատարած երկրորդ այցելությունից ընդամենը մեկ օր առաջ՝ մարտի 16-ին, իշխանական վերահսկողության ներքո գտնվող եբրայալեզու *News1.co.il* կայքում տեղ գտավ Հայոց ցեղասպանու-

[3] Շիմոն Պերեսի շրջայցը Հարավային Կովկաս և Կենտրոնական Ասիա, ինչպես հայտնի է, նախատեսվում էր իրականացնել երեք երկրներում՝ Ադրբեջան, Ուզբեկստան և Ղազախստան: Սակայն հետագայում, ինչպես վկայում են դիվանագիտական աղբյուրները, Ուզբեկստանի նախագահ Ի.Քարիմովը «խիստ ծանրաբեռնվածության» պատճառով չկարողացավ ժամանակ գտնել Իսրայելից ժամանող գործընկերոջն ընդունելու համար: Շիմոն Պերեսի այցը տեղի ունեցավ միայն Ադրբեջան և Ղազախստան:

թյանը նվիրված ծավալուն հրապարակում, որտեղ Թուրքիան ուղղակիորեն մեղադրվում էր «հայերի սարսափելի սպանդի» կազմակերպման մեջ: Ընդ որում՝ այդ հոդվածում հղումներ էին արվում նաև 1915թ. Պաղեստինում գործող սիոնիստական ընդհատակյա կազմակերպության կողմից ներկայացված փաստերին:

Հայոց ցեղասպանության թեմային անդրադարձան նաև Իսրայելի ռազմաքաղաքական շրջանակները: Երկրի բարձրագույն հրամկազմի ամենաազդեցիկ ու հեղինակավոր գեներալներից մեկը՝ Իսրայելի պաշտպանության բանակի ցամաքային զորքերի գլխավոր հրամանատար Ավի Միզրահին, անդրադառնալով Գազայի պատերազմի կապակցությամբ թուրքերի բարձրացրած աղմուկին, վերջիններիս խորհուրդ տվեց «…ռազմական հանցագործության մեջ ինչ-որ մեկին մեղադրելուց առաջ սեփական պատմությունն ուսումնասիրել»: Այս հայտարարությունից հետո հարցը սրվեց այն աստիճան, որ Թուրքիայում Իսրայելի դեսպան Հաբի Լևին բացատրություններ տալու նպատակով հրավիրվեց Թուրքիայի արտաքին գործերի նախարարություն[4]:

Ինքնին հասկանալի է, որ համենայնդեպս ներկա փուլում Իսրայելը բոլորովին չի պատրաստվում ճանաչել Հայոց ցեղասպանությունը, իսկ այս ամենը պարզապես արվում է Թուրքիայի վրա ճնշում գործադրելու նպատակով: Այսինքն՝ կրկին ականատեսն ենք մեզ ծանոթ խաղային ձեռագրի: Հերթական անգամ ինչ-որ մեկը Թուրքիային «կարգի հրավիրելու» կամ «իր տեղը ցույց տալու» նպատակով որպես ճնշիչ մեթոդիկա փորձ է անում կիրառել հայկական գործոնը:

Եթե Թուրքիայի հետ կապված փոխառնչություններում Իսրայելը վերջին շրջանում գոնե առերևույթ ավելի շատ դրսևորում է «հայամետ» կեցվածք, ապա բոլորովին այլ է պատկերը Ադրբեջանի հետ կապված առնչություններում: Վերջինիս հետ օրեցօր սերտացող հարաբերությունների արդյունքում Իսրայելը հայ-ադրբեջանական առնչությունների և հատկապես Ղարաբաղյան հակամարտության խնդրի կապակցությամբ որդեգրում է առավել ադրբեջանամետ կեցվածք:

Անկախ այն բանից, թե Թուրքիային «իր տեղը ցույց տալու» ինչ մեթոդիկա է ընտրում կամ հայ-ադրբեջանական փոխհարաբերությունների առթիվ ինչպիսի կեցվածք է որդեգրում Իսրայելը, այնուամենայնիվ, դատելով Հարավային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի ուղղությամբ ակտիվացող գործունեությունից՝ Իսրայելի արտաքին քաղաքականության ներկայիս գերակայություններից և ՀՀ-Իսրայել վերջին ժամանակահատվածի փոխառնչությունն-

[4] Թուրքերի բարձրացրած աղմուկի արդյունքում ՑԱԽԱԼ-ի (Իսրայելի պաշտպանության բանակ) մամլո ծառայությունը հաղորդագրություն հրապարակեց, որ Իսրայելի ցամաքային զորքերի գլխավոր հրամանատար Ավի Միզրահին արտահայտել է իր անձնական տեսակետները:

րից, կարելի է եզրակացնել, որ Իսրայելը հակված է ՀՀ-ի հետ հարաբերությունների աշխուժացմանը և փոխշահավետ համագործակցության ծավալմանը: Ընդ որում՝ իսրայելյան առանձին քաղաքական մեկնաբաններ, խոսելով Իսրայելի նոր քաղաքական գերակայությունների մասին, «Հարավային Կովկաս և Կենտրոնական Ասիա» եզրի փոխարեն շատ հաճախ պարզապես շեշտում են «ՀՀ և Կենտրոնական Ասիա» բառակապակցությունը[5]:

Իսրայելի մամուլում լուրջ արձագանքներ և հետաքրքիր մեկնաբանություններ առաջացրեց ընթացիկ տարում, կարճ ժամանակահատվածում Շեմի Ցուրի՝ երկու անգամ ՀՀ այցելելու փաստը: Իսրայելի լրատվական աղբյուրներից շատերն այդ այցելությունները գնահատեցին պատմական երկու երկրների փոխհարաբերություններում: Առաջին այցելության ժամանակ Շեմի Ցուրը հանդիպումներ ունեցավ հանրապետության գրեթե ողջ բարձրագույն ղեկավարության հետ: Վերջինիս նախ ընդունեց ՀՀ արտաքին գործերի նախարար Է.Նալբանդյանը, որից հետո նա արժանացավ ՀՀ ԱԺ նախագահ Հ.Աբրահամյանի, ՀՀ վարչապետ Տ.Սարգսյանի և Վեհափառ հայրապետ Գարեգին 2-րդ կաթողիկոսի ընդունելությանը: Այնուհետև Իսրայելի դեսպանին ընդունեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, որին էլ նա հանձնեց իր հավատարմագրերը:

Երկրորդ այցելության ժամանակ Շեմի Ցուրը հանդիպումներ ունեցավ ՀՀ մշակույթի նախարար Հ.Պողոսյանի և փոխվարչապետ Ա.Գևորգյանի հետ:

Հետաքրքիր անդրադարձներ առաջացրեց նաև ՀՀ փոխարտգործնախարար Ա.Կիրակոսյանի ս.թ. մայիսի 26-27-ին Իսրայել կատարած այցը: Այդ այցելության կապակցությամբ իսրայելյան մամուլում և վերլուծական կառույցներում տեղ գտած բոլոր մեկնաբանությունները հանգում էին մեկ ընդհանուր վերջաբանի, որ այս երկրները կարիք ունեն «դեսպանատների փոխանակման»:

Համենայնդեպս, այսօր այլևս առկա են ՀՀ-ի և Իսրայելի միջև երկկողմանի քաղաքական, տնտեսական, առևտրական և ընդհանուր առմամբ տարածաշրջանային համագործակցության բոլոր հիմքերը: Բացի դրանից, այսօր միևնույն ժամանակ առկա են նաև նախադրյալներ, որոնք ուղղակի *ստիպում են* ՀՀ-ին ակտիվացնել արտաքին քաղաքականությունն Իսրայելում: Դա Երուսաղեմի հին քաղաքի հայկական թաղամասի, տեղի հայ համայնքի և Սրբոց Հակոբյանց վանական միաբանության առջև ծառացած հիմնահարցերն են, ինչպես նաև մեր պատկառելի հարստությունների պահպանության խնդիրը,

[5] Նման արտահայտության հեղինակները համարում են, որ Ադրբեջանի և Վրաստանի հետ հարաբերությունների հաստատման և ամրապնդման խնդիր Իսրայելն այլևս չունի: Հետևաբար, խոսել Հարավային Կովկասում ակտիվացող քաղաքականության մասին, նշանակում է՝ խոսել ՀՀ-ի հետ տարվող աշխատանքների ակտիվացման մասին:

որն իրադարձությունների՝ մեզ համար ոչ շահեկան զարգացման դեպքում (իսկ վերջին ժամանակահատվածի տեմպերը ճիշտ այդպիսին են), կարող է և լուրջ գերխնդիր դառնալ:

Եթե ՀՀ-ն պետք է ակտիվացնի և խորացնի հարաբերություններն Իսրայելի հետ, ապա որքան այդ քայլերն արագ կատարվեն, այնքան լավ: Եթե ՀՀ-ն Իսրայելում երբևէ պետք է բացի դեսպանատուն, ապա որքան շուտ դա արվի, այնքան լավ: Այս հարցն առնչվում է Հայաստանի Հանրապետության և ողջ Հայության կենսական շահերին, և ենթադրելով խոր ու համակողմանի ուսումնասիրություն՝ միաժամանակ պահանջում է նաև արագ ու հստակ կողմնորոշում՝ դրանից բխող համապատասխան գործողություններով:

Այս հարցում ժամանակը մեր օգտին չի աշխատում…

# ԻՍՐԱՅԵԼԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

*Հարություն Մարության*

Փոքր տարածք և սահմանափակ բնական ու ֆինանսական ռեսուրսներ ունեցող Իսրայել պետությունը, որը նաև շարունակական ռազմական հակամարտության մեջ է իր հարևանների մի մասի հետ, ստիպված է անընդհատ որոնել ոչ ստանդարտ՝ ստեղծագործական լուծումներ երկրի առաջընթացի ապահովման համար: Եվ այստեղ Իսրայելին օգնության է գալիս գիտությունը, մասնավորապես՝ բարձր տեխնոլոգիաների բնագավառում գրանցվող հաջողությունները: Ընդ որում՝ դրանք տեղ են գտնում ռազմական արդյունաբերությունից և համալսարանական ու այլ հետազոտական կենտրոններից դուրս: Այս առումով բնութագրական է, որ Իսրայելն աշխարհում գրավում է ԱՄՆ-ից հետո երկրորդ տեղը բարձր տեխնոլոգիաների բնագավառում ինովացիոն և շուկայական ուղղվածություն ունեցող ապրանք արտադրող նոր ընկերությունների ստեղծման գործում[1]:

Արդ, ո՞րն է պատճառը, որ Իսրայելն արագընթաց տեմպերով զարգացումներ է գրանցում բարձր տեխնոլոգիաների ասպարեզում: Հասկանալու համար Իսրայելի գիտական ու, հատկապես, միջազգային գիտական քաղաքականությունը և դրա դերը երկրում ինովացիաների զարգացման մեջ, գնահատելու համար միջազգային գիտական կապերի[2] կոնցեպցիայի ձևավորման բարդությունները, անհրաժեշտ է լիարժեք պատկերացում ունենալ երկրի զարգացման պատմության փուլերի մասին[3]:

---

[1] Տես. *Саймон Грайвер*. Грани израильской экономики. http://www.posolstvo.narod.ru/lib/ hitech.html

[2] Հայաստանում գիտությամբ զբաղվող բոլոր սուբյեկտների համար համագործակցության մթնոլորտի և մեխանիզմների ապահովման մասին, ինչպես նաև աշխարհի լավագույն գիտական կենտրոնների հետ ՀՀ ԳԱԱ ինտեգրման խնդիրների անհրաժեշտության վրա վերջերս ուշադրություն հրավիրեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը: Տես. *Արմենուհի Մելքոնյան*, ՀՀ ԳԱԱ. տարեկան հաշվետու ժողով: Եթե տաշած քար լինի, գետնին չի մնա. – Հայաստանի Հանրապետություն, 23 ապրիլի 2009թ., թիվ 75 (4666): Նույն խնդիրներին մեծ ուշադրություն նվիրելու անհրաժեշտությունը շեշտեց նաև ՀՀ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը «Նորավանք» ԳԿՀ-ում ս.թ. մայիսի 22-ին ունեցած զեկուցման մեջ:

[3] Մանրամասն տես. *Н. В. Жадовец*. Международный аспект инновационного развития Израиля. - Вестник Томского государственного университета, 2008, октябрь (№ 315), с. 83-87. http:// sun.tsu.ru/mminfo/000063105/315/image/315-083.pdf

Իսրայելի տնտեսագիտական պատմությունը ներկայացնում է սկզբում կարծր տնտեսական կուրսից անցում դեպի ներմուծմանը փոխարինող արդյունաբերության, ապա և արտահանմանն ուղղված տնտեսության վերափոխման վառ օրինակ: Չունենալով օգտակար հանածոներ և ոչ էլ բերքատու հողեր, Իսրայելը հույսը, շեշտը դրեց կոմերցիոն գիտության վրա որպես ազգային տնտեսության զարգացման հիմնական աղբյուրի: Դրա շնորհիվ Իսրայելն իր տնտեսական և սոցիալական զարգացման մեջ իրականացրեց ֆանտաստիկ առաջանցում՝ դառնալով ժամանակակից հետինդուստրիալ հասարակության ճանաչված լիդերներից մեկը:

Այսօր Իսրայելը տեղ է գրավում աշխարհի քսան ամենազարգացած երկրների ցանկում և հայտնի է ամբողջ աշխարհում իր բարձրտեխնոլոգիական արդյունաբերությամբ, պատրաստված ինժեներներով[4], զգալի գիտական նվաճումներով: Հաստատուն տնտեսական աճը ձեռք է բերվում ի հաշիվ տնտեսական մեխանիզմի մեջ նոր լուծումներով պայմանավորված ներդրումների գործընթացի արագացման և ինովացիոն գործունեության անընդհատության ապահովման: Եթե վերցնենք «ինովացիոն ինդեքսի» ցուցիչը, որը բնութագրում է գիտության և բիզնեսի փոխազդեցության մակարդակը և գիտական մշակումների՝ տնտեսության մեջ ներդրման արագությունը, ապա համաշխարհային առաջատարներն են ԱՄՆ-ը, Թայվանը, Ֆինլանդիան, Շվեդիան և Ճապոնիան: Իսրայելը 6-րդ տեղում է[5], Գերմանիան՝ 10-րդ, Մեծ Բրիտանիան՝ 14-րդ, Ֆրանսիան՝ 18-րդ: Իսրայելի ներդրումները գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների մեջ *(Research and Development – R&D)*[6] աշխարհում ամենաբարձրերից մեկն են, իսկ 2008թ. տվյալներով, թերևս, ամենաբարձրն են և կազմում են համախառն ներքին արտադրանքի 4.74%-ը (համեմատության կարգով նշենք, որ երկրորդ տեղում գտնվող Շվեդիայում այն կազմում էր ՀՆԱ 3.63%-ը)[7]: Երկրում գործում են ավելի քան 3000 բարձրտեխնո-

[4] Իսրայելն աշխարհում գրավում է առաջին տեղն ինժեներների քանակով. այստեղ բնակչության 10 հազ. շնչին ընկնում է 135 ինժեներ, մինչդեռ ԱՄՆ-ում այդ ցուցանիշը 85 է: Տես. *Саймон Грайвер*, նշվ. աշխ.:

[5] Տես. http://abcdefgh.livejournal.com/397059.html Հայաստանի մասով մանրամասն տես. *Оганес Ваганян*, Незнание и бюрократизм – угроза национальной безопасности Армении, ее устойчивому и конкурентоспособному развитию. http://www.iatp.am/ovahanyan /economica.htm

[6] Սրանք ենթադրում են միջոցառումների համալիր, որոնք իրենց մեջ ներառում են ինչպես գիտական հետազոտություններ, այնպես էլ փորձարարական ու քիչ քանակությամբ թողարկվող արտադրություն, որոնք նախորդում են նոր ապրանքի կամ համակարգի արդյունաբերական թողարկմանը: *R&D-ի* ուղղությամբ արվող ծախսերը կարևոր ցուցիչ են ինչպես առանձին ընկերության, այնպես էլ պետության ինովացիոն գործունեության:

[7] Մանրամասն տես. http://www.tekes.fi/eng/publications/A_technopol/RD-OECD.PPT#504,1, R&Dinvestments in some countries Մեկ այլ աղբյուրում նշված է, որ Իսրայելի տնտեսության միայն քաղաքացիական ոլորտին տարեկան հատկացվում է ՀՆԱ 4.9%-ը: Տեխնոլոգիական պատրաստականության ցուցանիշով (2006թ. տվյալներ), որն արտացոլում է տնտեսության և կյանքի բոլոր ոլորտներում բարձր տեխնոլոգիաների ներգրավվածության մակարդակը, Իսրայելն աշխարհում գրավում է երրորդ տեղը՝ զիջելով միայն Շվեդիային և Սինգապուրին: Ստեղծագործական ներուժի տնտեսական ինդեքսով, որն արտացոլում է բարձր տեխնոլոգիաների զարգացման մակարդակը, ինչպես նաև այդ բնագավառում նոր ձեռնարկությունների ստեղծման պայմանները, Իսրայելն աշխարհում գրավում է չորրորդ տեղը՝ ԱՄՆ-ից, Ֆինլանդիայից և Սինգապուրից հետո: Տես. Страны и регионы мира: экономико-политический справочник. Израиль http://slovari.yandex.ru/dict/countries/article/cun-0194.htm& stpar1=1.1.1

լոգիական ընկերություններ:

1960-ական թթ. վերջին իսրայելական տնտեսության կառուցվածքի մեջ տեղի ունեցան էական փոփոխություններ. զարգացման մեջ առաջնայնություն ստացավ գիտատար արդյունաբերությունը, համապատասխանաբար գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում՝ կիրառական հետազոտությունները: Հենց այդ ժամանակ էլ սկսվեց նորագույն տեխնոլոգիաների և գիտահետազոտական մշակումների վրա հենված արտադրանքի արտահանումը, ճիշտ է, բավականին համեստ ծավալներով:

Եվ չնայած Իսրայելն այն փոքրաթիվ երկրներից է, որտեղ համալսարաններն ու այլ գիտական հաստատությունները բացվել էին պետական ինքնիշխանության հռչակումից շատ առաջ, Իսրայել պետության հռչակման առաջին տարիներին երկրում չկար թե՛ բավարար գիտատեխնիկական ներուժ, թե՛ կազմակերպական կառույցներ[8]: Երկիրը փաստորեն պայքար էր մղում տնտեսության կենդանի մնալու համար:

Որոշ երկրներում տեղ գտած ինովացիոն գործընթացները գրավեցին իսրայելցի մասնագետների ուշադրությունը: Բարձրակարգ մասնագետների առկայությունը և պետության քաղաքականությունը, ուղղված արտասահմանյան (գերազանցապես ամերիկյան) ներդրումների ներգրավմանը, հանգեցրին իսկական վերելքի: Պետք է նշել, որ բարձր տեխնոլոգիաների և ազդեցիկ տնտեսական ձեռքբերումների հարցում կարևոր դեր խաղացին ռազմական բնագավառում իրականացված մշակումները: Մասնավորապես, ռազմական ոլորտում իրականացված գիտական հետազոտությունները նշանակալից ազդեցություն ունեցան իսրայելական արդյունաբերական սեկտորի, գիտական ընկերակցության վրա և այլն: Սակայն ռազմական ծախսերի իջեցումն ուղեկցվում էր խոր կառուցվածքային փոփոխություններով և գործարար ոլորտի գիտահետազոտական հնարավորությունների նկատելի բարելավումներով:

Միջազգային համագործակցությունը գիտական հետազոտությունների և տեխնոլոգիաների բնագավառում իսրայելական արտաքին քաղաքականության կենտրոնական բաղկացուցիչներից է: Վերջին տարիներին այն էականորեն ընդլայնվել է ու խորացել, և ներկայումս Իսրայելը համագործակցում է աշխարհի շատ երկրների հետ ինչպես պետական, նույնպես և բիզնես ոլորտի մակարդակում: Հետազոտությունների գների անընդհատ աճն ու պետական ֆինանսավորման նվազումը բերեցին նրան, որ իսրայելական համալսարանները վերջին տարիներին փնտրում են լրացուցիչ միջոցների աղբյուրներ: Իսրայելի գրեթե ամեն մի բուհում գործում են միջազգային կապերի բաժիններ,

[8] Իսրայելում գիտության և բարձրագույն կրթության զարգացման պատմության հիմնական դրվագներն արտացոլված են Հրեական էլեկտրոնային հանրագիտարանի էջերում: Մանրամասն տես. http://www.eleven.co.il/article/11747

որոնք պատասխանատու են միջազգային գիտական համագործակցության զարգացման, համատեղ *start-up* ընկերությունների ստեղծման համար և այլն[9]: Բարձրագույն ուսումնական, գիտահետազոտական հաստատությունների և ձեռնարկությունների գիտաշխատողների անմիջական երկխոսությունը, ինչպես նաև տարբեր երկրների երիտասարդ գիտաշխատողների, ուսանողների հանդիպումները ևս մի կարևոր նախադրյալ են արդյունավետ երկկողմանի գիտական կապերի զարգացման համար:

Իսրայելի հետաքրքրվածությունը միջազգային գիտական կապերի զարգացմամբ թելադրվում է նրանով, որ սահմանափակ նյութական ռեսուրսներ ունեցող փոքր երկիրը չի կարող հասնել նկատելի գիտական հաջողությունների բացառապես սեփական ջանքերով: Աշխարհում ճանաչում ունեցող իսրայելական գիտության բարձր մակարդակն այն հիմնական գործոնն է, որը դրդում է զարգացած երկրներին որոնել Իսրայելի հետ գիտական համագործակցության և կոոպերացիայի եզրեր: Միջազգային գիտական համագործակցության մեջ Իսրայելի մասնակցությունն ընդգրկում է բոլոր մակարդակները՝ անհատական գիտական շփումներից և արտասահմանյան ու միջազգային գիտական ծրագրերում իսրայելական մասնագետների խմբերի մասնակցությունից մինչև համագործակցություն միջպետական մակարդակում:

Միջազգային համագործակցության մեջ կապող օղակի դեր է կատարում իսրայելական արդյունաբերության *MATIMOP (Israeli Industry Center for R&D)* գիտահետազոտական կենտրոնը: Այն ոչ կոմերցիոն կազմակերպություն է և իրականացնում է միջազգային գիտական համաձայնություններ բարձր տեխնոլոգիաների բնագավառի հանրության հետ Արդյունաբերության և առևտրի նախարարության գլխավոր գիտնականի բյուրոյի անունից[10]: Կենտրոնը գործում է իբրև մի օղակ, որը կապում է իսրայելական ընկերություններին և նրանց միջազգային գործընկերներին: Այն իսրայելական կազմակերպությունների և Եվրոպական միության միջև տեղեկատվության և ամեն ինչում աջակցության իրականացման գլխավոր խողովակն է:

Իսրայելի՝ կառավարական կազմակերպությունների մակարդակով միջազգային գիտական կապերի զարգացման պատասխանատվությունը դրված է Գիտական հետազոտությունների և զարգացման ազգային խորհրդի, ինչպես նաև Արտաքին գործերի նախարարության մշակութային և գիտական կապերի

[9] Աշխարհում *start-up* ընկերություններ (բնակչության թվաքանակին համեմատ) ամենաշատն ունի Իսրայելը: Նման ընկերությունների բացարձակ թվով Իսրայելն աշխարհում զիջում է միայն ԱՄՆ-ին: Տես. Israel – a Land of Tech Promise. – Israel High-Tech and Investment Report. March 2009. http://www.ishitech.co.il/0309 ar7.htm

[10] Մանրամասն տես. http://www2.matimop.org.il/1/index.html MATIMOP-ի տվյալների բազան ընդգրկում է բարձր տեխնոլոգիաների ոլորտի իսրայելական տարբեր չափի այն ընկերությունները, որոնք շահագրգռված են *R&D* ծրագրերում միջազգային համագործակցության մեջ:

բաժնի վրա: Դեռևս 1972թ. նշյալ Ազգային խորհուրդն առաջ քաշեց «Իսրակոն» ծրագիրը՝ ուղղված բնական և հասարակական գիտությունների և տեխնոլոգիաների բնագավառներում իսրայելական և արտասահմանյան առաջատար մասնագետների միջև գիտական տեղեկատվության կանոնավոր փոխանակման և քննարկումներին նպաստելու խնդրով իսրայելական գիտահետազոտական կոնֆերանսների կազմակերպման օժանդակությանը: Իսրայելական գիտությունների ակադեմիան ներկայացնում է Իսրայելը Գիտական միությունների միջազգային խորհրդում, Եվրոպական գիտական հիմնադրամում, անմիջական կապեր է պահպանում արտասահմանյան ազգային գիտական կազմակերպությունների հետ, մասնակցում է արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին և օժանդակում նման կոնֆերանսների հրավիրմանը Իսրայելում: Արտաքին գործերի նախարարության միջազգային կոոպերացիայի բաժինը զբաղվում է նաև Իսրայելի գյուղատնտեսության, բժշկության, առողջապահության, կրթության ոլորտի ձեռքբերումներով հետաքրքրված զարգացող երկրների մասնագետների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպման հարցերով:

Քանի որ բարձր տեխնոլոգիաների բնագավառում Իսրայելի հիմնական գործընկերը Միացյալ Նահանգներն է, զարմանալի չէ, որ այդ երկիրն արդյունաբերության մեջ ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման և գիտական հետազոտությունների ոլորտում երկկողմանի միջպետական համագործակցության հիմնական գործընկերն է: Ամերիկա-իսրայելական «հատուկ գիտական հետաքրքրություններն» ունեն համեմատաբար երկար պատմություն:

Երկու երկրների միջև քաղաքական հարաբերություններ հաստատելուց հետո հնարավոր դարձավ ձեռնամուխ լինել գիտական կապերի զարգացմանը: Սակայն սկզբնական փուլում՝ 1950-ական թթ., այդ հարաբերությունները կառուցվում էին առանձին գիտնականների և որոշ արդյունաբերական ընկերությունների գիտական կապերի հենքին: Իսրայելում նոր-նոր էր ձևավորվում գիտելիքը առևտրային ապրանք դարձնելու մոդելը: 1959թ. Վեյցմանի գիտահետազոտական ինստիտուտի *(Weizmann Institute of Science)* շրջանակներում հիմնադրվեց *YEDA* կազմակերպությունը[11], որն առաջին իսրայելական և ընդհանրապես աշխարհում առաջին կազմակերպություններից էր՝ ուղղ-

[11] *Yeda Research and Development Company Ltd.* Միայն 2007-2008թթ. ընկերությունն իրականացրել է Վեյցման ինստիտուտի մշակումների ավելի քան 3000 ներկայացումներ *(presentations)* տարբեր ընկերությունների, կոնֆիդենցիալ տեղեկատվություն պարունակող ավելի քան 250 ներկայացումներ հետաքրքրված ընկերություններին, կնքել է ավելի քան 40 լիցենզավորման համաձայնություններ և այլն: Տարբեր ընկերությունների, ինչպես նաև Արդյունաբերության և առևտրի նախարարության գլխավոր գիտնականի կողմից *YEDA-ի* խողովակներով ֆինանսավորվել են Վեյցման ինստիտուտի ավելի քան 80 ծրագրեր: Մանրամասն տես. http://www.yedarnd.com, ինչպես նաև http://www.weizmann.ac.il/acadaff/ Scientific_Activities/current/weizmann.html

ված գիտական ձեռքբերումների առևտրայնացմանը նպաստող տեխնոլոգիաների փոխանցմանը: 1964թ. *Motorola* ընկերությունը ստեղծեց գիտահետազոտական կենտրոն Իսրայելում[12]: 1965թ. հիմնադրվեց Իսրայելա-ամերիկյան առևտրաարդյունաբերական պալատը:

1960-ական թթ. վերջերից Վաշինգտոնում հասկացան, որ Իսրայելը կարող է ծառայել իբրև անփոխարինելի խոչընդոտ Մերձավոր Արևելքում խորհրդային ազդեցության ծավալման դեմ: Հենց այդ ժամանակ էլ սկսվեց ԱՄՆ զանգվածային օգնությունը Իսրայելին: 1967թ. պատերազմից հետո, երբ Իսրայելը ցույց տվեց իր հարևանների նկատմամբ որակական ռազմական և տեխնոլոգիական գերակշռություն, ԱՄՆ-ը փոխեց քաղաքականությունն Իսրայելի նկատմամբ և հետաքրքրվեց նրա հետ համագործակցության հնարավորություններով: Համաձայն պարբերաբար անցկացվող հարցումների, 1967թ. ի վեր Իսրայելը վայելում է ամերիկյան հասարակության զգալի օժանդակությունը:

Բազմաթիվ քննարկումներից հետո գիտական համագործակցությունը սկսեց ձեռք բերել կոնկրետ ձևաչափեր: Արդյունքում ձևավորվեցին մի շարք խոշոր համատեղ գիտական ծրագրեր, ինչն այն ժամանակների համար միջազգային գիտական կապերի նոր ձև էր: Գիտության և տեխնիկայի բնագավառում ԱՄՆ-ը դարձավ Իսրայելի համար կարևորագույն գործընկերը, ինչն անմիջապես իր դրսևորումը գտավ մի քանի համաձայնագրերում: Ավելի ու ավելի շատ իսրայելցի երիտասարդ գիտնականներ սկսեցին անգլերեն լեզվով գիտելիքներ ձեռք բերել և կատարելագործվել ԱՄՆ-ում՝ այդպիսով հիմք դնելով սերտ գիտական և արտադրական կապերի կադրային բազայի:

1974թ. *Intel* ընկերությունը բացեց հետազոտական կենտրոն Հայֆայում: Այն ժամանակ այդտեղ աշխատում էր ընդամենը հինգ ինժեներ: Ներկայումս *Intel-ը* Իսրայելում ունի ութ գիտաարտադրական կենտրոն, որոնցում մշակվել են մի շարք համակարգչային պրոցեսորներ, որոնք լայնորեն հայտնի են ողջ աշխարհում[13]:

Համատեղ հետաքրքրություն ներկայացնող քաղաքացիական ոլորտում հետազոտությունները խրախուսելու նպատակով 1972թ. հիմնադրվեց Ամերիկա-իսրայելական գիտական հիմնադրամը *(The U.S. – Israel Binational Science Foundation – BSF)*[14]: Այդ հիմնադրամը դարձավ առաջին կառույցը, որը տրա-

[12] *Motorola* ընկերության բջջային հեռախոսները մշակվել են Իսրայելում, այդ ընկերության ամենամեծ զարգացման կենտրոնը ևս գտնվում է Իսրայելում: Տես. *Israel – a Land of Tech Promise. – Israel High-Tech and Investment Report.*

[13] Իսրայելում տեղակայված *Intel-ի* կենտրոններում են ստեղծվել *Pentium MMX, Dothan/Centrino and Pentium* տեխնոլոգիաները: Մայքրոսոֆթ ընկերության՝ ԱՄՆ-ից դուրս գտնվող ստրատեգիական երեք կենտրոններից մեկը տեղակայված է Իսրայելում: Իսրայելական *M-Systems* ընկե-ությունն է մշակել *USB-Flash Drive* համակարգը: Տես. *Israel – a Land of Tech Promise.*

[14] Մանրամասն տես. http://www.bsf.org.il/BSFPublic/DefaultPage1.aspx?PageId=11&innerText ID=11

մադրում էր ֆինանսական օժանդակություն և թեթևացնում էր ԱՄՆ-ի և Իսրայելի գիտնականների գիտական համագործակցությունը: Հիմնադրամի շահույթները գոյանում են 100 մլն դոլար դրամագլխի տոկոսադրույքներից: Երկու կառավարությունները 1972թ. կատարեցին 30-ական մլն դոլարի ներդրումներ, իսկ 1984թ. ավելացրին ևս 20-ական մլն դոլար: Այդ հիմնադրամի նշանակությունը Իսրայելի և ԱՄՆ-ի միջև գիտատեխնիկական համագործակցության մեջ դժվար է գերագնահատել, քանի որ հիմնադրամը սուբսիդավորում է գիտության տարբեր ոլորտներին առնչվող հետազոտական ծրագրեր՝ մարդաբանությունից մինչև բիոբժշկական ինժեներիա, ֆիզիկա և շրջակա միջավայրի պահպանության հարցեր: Հիմնադրման օրվանից *BSF*-ը տրամադրել է ավելի քան 4000 հետազոտական դրամաշնորհներ շուրջ 480 մլն դոլարի չափով: Դրանցից շատ-շատերը բերել են կարևորագույն գիտական, բժշկական և տեխնոլոգիական ճեղքումների պրակտիկ դրսևորումների լայն սպեկտրի մեջ: Բավական է նշել, որ 1959-ից ի վեր բժշկության, ֆիզիկայի, քիմիայի և տնտեսագիտության բնագավառի Նոբելյան մրցանակակիրներից 38-ը առնվազն մեկ անգամ դրամաշնորհ են ստացել *BSF*-ից[15]:

Հիմնադրամի աշխատանքներին ակտիվ մասնակցության շնորհիվ Իսրայելը բավականին զգալի օգուտներ է ստանում, քանի որ աջակցելով համատեղ հետազոտական ծրագրերին՝ երկիրը կարողացավ ընդլայնել և կատարելագործել իր հետազոտական բազան, հասնելու համար զարգացման այնպիսի մակարդակի, որն անհնարին կլիներ հետազոտությունների ինքնուրույն իրականացման պարագայում: Կարևոր հանգամանք էր և այն, որ իսրայելցի գիտնականների համար մատչելի, հասանելի դարձան ամերիկյան հնարավորությունները և գիտափորձարարական սարքավորումները, որոնք անհասանելի էին Իսրայելում: Այդպիսով է, որ իսրայելցիները կարողացան առաջիններից մեկը տեղեկատվություն ստանալ ամերիկյան հետազոտությունների արդյունքների մասին, ինչը նույնպես նպաստեց Իսրայելում գիտական առաջընթացին:

Նշյալ հիմնադրամին հաջորդեց 1978թ. Գյուղատնտեսության բնագավառում ամերիկա-իսրայելական հետազոտությունների և մշակումների համատեղ հիմնադրամը *(United States-Israel Binational Agricultural Research and Development Fund – BARD),* որը կոչված էր իրականացնել և աջակցել երկու երկրների գյուղատնտեսության համար էլ մեծ նշանակություն ունեցող հետազոտություններին և ինովացիաների զարգացմանը: Այն ձևավորվեց երկու կառավարությունների կողմից համատեղ 40-ական մլն դոլար ներդրումից, որին 1984թ. ավելացվեց 15-ական մլն դոլար: Իր գործունեության սկզբնավորումից ի վեր *BARD*-ը ֆինանսավորել է ավելի քան 1000 ծրագիր (250 մլն դոլար ընդհանուր գումարի չափով) աշխարհի ավելի քան չորս տասնյակ երկրում: Հաշ-

[15] Մանրամասն տես. http://www.bsf.org.il/BSFPublic/DefaultPage1.aspx?PageId=13&innerText ID=13

վարկված է, որ իրականացված միայն 10 ծրագրի օգուտները լոկ ԱՄՆ-ի համար կազմում են շուրջ 450 մլն դոլար, ևս 300 մլն դոլարի օգուտներ են արձանագրված Իսրայելի համար[16]:

1977թ. հիմնվեց Արդյունաբերության ոլորտում հետազոտությունների և մշակումների ամերիկա-իսրայելական միջպետական հիմնադրամը *(Israel-U.S. Binational Industrial Research and Development Foundation – BIRD–F):* Հիմնադրամի նպատակն է արտադրության մեջ տեխնիկական նորույթների ներդրմանն օժանդակելու միջոցով նպաստել բարձր տեխնոլոգիաների բնագավառում ամերիկյան և իսրայելյան գիտնականների փոխշահավետ համագործակցությանը: Ներկայումս այդ հիմնադրամի միջոցները շուրջ 110 մլն դոլարի կարգի են: Այդ հիմնադրամն ամեն տարի օժանդակում է մոտ 20 ծրագրերի, որոնց ընդհանուր արժեքը կազմում է մոտ 11 մլն դոլար: Հիմնադրման օրվանից *BIRD–F-ը* օժանդակել է 740 ծրագրի՝ ներդնելով 245 մլն դոլար: Ծրագրերի արդյունքների ապրանքաշրջանառության գումարը կազմում է ավելի քան 8 մլրդ դոլար[17]:

Իսրայելում այդ հիմնադրամը համագործակցում է մեծությամբ տարբեր ընկերությունների հետ, այդ թվում նաև համեմատաբար վերջերս ստեղծված, որոնք ունեն առաջավոր տեխնիկական և արտադրական ներուժ, ճկուն են իրենց կորպորատիվ քաղաքականության մեջ և պատրաստ են միավորել իրենց ջանքերն ամերիկյան ֆիրմաների հետ գիտատար արտադրանքի մշակման և առևտրային օգտագործման համար: Հիմնադրամը ձեռք է բերել՝ հատկապես երիտասարդ ինովացիոն ֆիրմաների համար, ցանկալի գործընկերոջ իմիջ՝ թույլ տալով նրանց կիսել իր հետ նախագծային ռիսկերը և թեթևացնել *R&D-ի* ծախսերը:

1980-ական թթ. կեսերից պայմանները փոխվեցին: Բարձր տեխնոլոգիաների արագ զարգացմանը զուգընթաց, շատ ամերիկյան ընկերություններ սկսեցին դրսևորել ավելի մեծ հետաքրքրություն, շահագրգռություն համատեղ գիտական արդյունքների օգտագործման մեջ: Իսրայելում ստեղծվեցին *Infenon, Vishay, Texas Instruments, Tower Semicon-ductor, National Semiconductor, Applied Materials* և այլ վերազգային *(transnational)* կորպորացիաների գիտահետազոտական կենտրոններ և արտադրություններ:

Ռեյգանի վարչակազմի տարիներին Իսրայելի և ԱՄՆ հարաբերություն-

[16] Մանրամասն տես. http://www.bard-isus.com/local.aspx?lfidl=2, http://www.jewishvirtual library.org/jsource/US-Israel/BARD.html

[17] Մանրամասն տես. http://www.birdf.com/Index.asp?CategoryID=22&ArticleID=79: Բնութագրական է, որ Իսրայելի արտահանման շուրջ 66%-ը կազմում է արդյունաբերության ոլորտի արտադրանքը (2002թ. տվյալներով՝ 28 մլրդ դոլար ծավալի մեջ այն հասնում է 20 մլրդ.): Տես. *Самуил Гиль.* Надежда на малые бизнесы. – Русский базар, N 8 (304), 14-20 февраля 2002г. http://www.russian-bazaar.com/Article.aspx?ArticleID=419

ները նկատելիորեն զարգացան: Ի լրացումն նախորդ պարտավորությունների, ստորագրվեցին փոխըմբռնման հուշագրեր (1981, 1988թթ.), որոնք դարձան պրակտիկ գործունեության հիմքեր ռազմական և քաղաքացիական ոլորտներում: 1980-ական թթ. սկզբից Իսրայելն արդեն հաշվվում էր ԱՄՆ-ի «ռազմավարական դաշնակից», իսկ 1987թ. անվանվեց «ՆԱՏՕ-ից դուրս ԱՄՆ-ի գլխավոր դաշնակից»: 1985թ. կնքվեց համաձայնություն ազատ առևտրի մասին, ինչպես նաև հուշագիր բիոտեխնոլոգիաների գծով իսրայելական կազմակերպության և բիոգիտության գծով կալիֆոռնիական հանձնաժողովի հետ:

1980-ական թթ. երկրորդ կեսին Իսրայելն ավելի հայտնի է դառնում իր գիտական նվաճումներով: ԱՄՆ օգնությամբ Իսրայելը ձգտում էր գիտական կապեր հաստատել և փորձի փոխանակություն իրականացնել զարգացող երկրների հետ[18]: Այդ նպատակով 1985թ. ստեղծվում է Զարգացման բնագավառում համատեղ հետազոտությունների ամերիկա-իսրայելական գիտահետազոտական ծրագիր: *USAID* կազմակերպությունն ամեն տարի այդ ծրագրի բյուջե է փոխանցում 3 մլն դոլար: Ծրագրի գործունեության ժամանակահատվածում տրվել են ավելի քան 350 դրամաշնորհներ (2005թ. տվյալներ):

ԱՄՆ նահանգներից Իսրայելի հետ բարձր տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության խնդրում առաջին տեղում է գտնվում Կալիֆոռնիան: Վերջինիս համար՝ որպես սպառման շուկա, Իսրայելը գրավում է 25-րդ տեղը (1997թ. տվյալներով դա կազմում էր 810 մլն դոլար): Կալիֆոռնիայում բնակվում են շուրջ քառորդ միլիոն նախկին իսրայելցիներ, այստեղ գործում են ավելի քան 60 իսրայելական ընկերություններ[19], այդ թվում նաև այնպիսի հայտնիները, ինչպիսիք են *4th Dimension Software, Advanced Recognition System, CI Systems, Tadiran* և այլն: Կալիֆոռնիական մի շարք խոշոր ընկերություններ, այդ թվում նաև *Intel, Monster Cable, Applied Materials, Bay Networks, Cisco,* ունեն դուստր ընկերություններ Իսրայելում: Առևտրական շրջանառության մեծ ծավալները, ինչպես նաև այդ ընկերություններում ներգրավված աշխատողների մեծ թվաքանակն այն գործոնների թվում էին, որոնք նպաստեցին երկու երկրների պետական կառույցներին ավելի մոտիկից հետաքրքրվելու բարձր տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության հարցերով:

1993թ. ստեղծվեց Գիտության և տեխնոլոգիաների գծով ամերիկա-իսրայելական հանձնաժողով *(US-Israel Science and Technology Commission)*[20]: Երկու կառավարությունները ներդրեցին 15-ական մլն դոլար: Հանձնաժողովի առաքելությունն է օժանդակել երկու երկրներում բարձր տեխնոլոգիաների զար-

[18] Հարցի շուրջ տես նաև. *И.В. Кокушкина, Л.В. Пукшанский.* Израиль в системе международных инвестиционных отношений. Вестник СПбГУ. Сер. 5. 2003. Вып. 3 (№ 21). http://www.econ. pu.ru/wps/wcm/resources/file/eb4f3f0529366e7/paper.doc

[19] Տես նաև. Сотрудничество США и Израиля в области Hi-Tec http://www.souz.co.il/israel/read. html?id=247

[20] Մանրամասն տես. http://www.usistc.org/fs_index.asp?currentFrame=2

գացմանը համատեղ ծրագրերի իրագործման ճանապարհով, համալսարանների և հետազոտական ինստիտուտների միջև իրականացնել գիտական փոխանակում, ինչպես նաև օժանդակել ռազմական տեխնոլոգիաները քաղաքացիական արդյունաբերության մեջ հարմարեցնելու գործին: Հանձնաժողովի գործունեության հիմնական թիրախներն են ինֆորմացիոն և բիոտեխնոլոգիաները, ինչպես նաև համագործակցությունն ամերիկյան Մթերքների և դեղամիջոցների գործակալության *(FDA – Food and Drug Administration)* հետ: Հանձնաժողովը հիմնեց Գիտության և տեխնոլոգիաների ամերիկա-իսրայելական հիմնադրամ՝ կոչված վերաբաշխելու այն դրամաշնորհները, որոնք տրամադրվում էին երկու պետությունների կառավարությունների կողմից: Հիմնադրամն ամեն տարի ֆինանսավորվում է ԱՄՆ ստանդարտների և տեխնոլոգիաների ազգային ինստիտուտի բյուջեից: Հանձնաժողովի կարևորագույն խնդիրներից մեկն է օգնել մասնավոր բիզնեսին համագործակցություն ծավալելու բարձր տեխնոլոգիաների բնագավառում: Համատեղ ձեռնարկություններին օժանդակելու ծրագիրն օգնում է համատեղ բարձրռիսկային ամերիկա-իսրայելական տեխնոլոգիական արտադրությունների ֆինանսավորմանը: Վերջին տվյալներով՝ այդ կերպ իրականացվում էին վեց ծրագրեր, որոնց համար տրամադրվել էր 24 մլն դոլար:

Համատեղ ձեռնարկություններին օժանդակության ծրագիրը շատ ընդհանուր գծեր ունի Արդյունաբերության ոլորտում հետազոտությունների և մշակումների ամերիկա-իսրայելական միջպետական հիմնադրամի *(BIRD)* հետ: Երկուսն էլ մշակված են ինովացիոն տեխնոլոգիաների առևտրայնացման բնագավառում մասնավոր բիզնեսին օժանդակելու համար: Սակայն կան նաև էական տարբերություններ: Այն դեպքում, երբ *BIRD* հիմնադրամն օժանդակում է տեխնոլոգիաների զարգացմանը առևտրայնացման վերջնական փուլում, Գիտության և տեխնոլոգիաների հանձնաժողովն օգնում է գաղափարը կոմերցիոն ապրանք դառնալու սկզբնական փուլում: Նման ծրագրերն ավելի մեծ ռիսկեր են կրում և պահանջում են ավելի նկատելի կապիտալ ներդրումներ: Այդ պատճառով էլ նշյալ հանձնաժողովի դրամաշնորհները տրամադրվում են ոչ թե երկու տարով, ինչպես *BIRD-ի* պարագայում է, այլ չորս:

Այս ծրագրի շնորհիվ Իսրայելը խթանում է մասնավոր բիզնեսին՝ զարգացնելու առաջատար տեխնոլոգիաները և իսրայելական ընկերություններին հնարավորություն է տալիս մուտք ունենալ ինովացիաների ամերիկյան փորձին:

1995թ. սկզբին Երուսաղեմում բացվեց Կալիֆոռնիայի նահանգի առևտրի դեպարտամենտի ներկայացուցչություն: Իսրայելն իր հերթին Կալիֆոռնիայում՝ Լոս Անջելեսում և Սանտա Կլարայում (Սիլիկոնյան հովտի կենտրոնում) ունի տնտեսական հարցերով ներկայացուցչություն:

Իսրայելի ավանդական ուղղվածությունը դեպի ԱՄՆ բերեց նրան, որ

Իսրայելը սկսեց պարզապես վերցնել ամերիկացի գործարարների և ներդրողների փորձը, ինչպես նաև ինովացիոն զարգացման ամերիկյան փորձը: Արդյունքում՝ բարձր տեխնոլոգիաների բնագավառում այսօր Իսրայելը ճանաչված է որպես համաշխարհային առաջատար և ունի չափերով երկրորդ «սիլիկոնյան հովիտը»: Այն տեղակայված է Թել Ավիվից հյուսիս գտնվող արդյունաբերական գոտում, որտեղ գտնվում են բազմաթիվ խոշորագույն արևմտյան ընկերությունների (այդ թվում՝ *Digital Equipment, Motorola, Intel* և այլն) մասնաճյուղերը: Սակայն ընկերությունների մեծամասնությունը ոչ մեծ, քիչ հայտնի, երիտասարդ ֆիրմաներ են և հիմնականում մասնագիտանում են համակարգչային ցանցերի անվտանգության ապահովման, ինտերնետ տեխնոլոգիաների, ծրագրաշարային ապահովման և ռոբոտատեխնիկայի բնագավառներում: 2005թ. Բիլ Գեյթսը բնութագրեց Իսրայելը որպես «Սիլիկոնային հովտի» մաս՝ այդպիսով ճանաչելով հրեական պետության արդյունաբերական ոլորտի հաջողությունները[21]:

ԱՄՆ-ի հետ հարաբերություններում ռազմարդյունաբերական կոոպերացիան Իսրայելի համար նաև տեխնոլոգիաների տրանսֆերտի հնարավորություն է: 1980-1990-ական թթ. ԱՄՆ-ը ավելի ու ավելի շատ էր ձգտում պահպանել Իսրայելի որակական առավելությունն իր հարևանների նկատմամբ, և այդ նպատակն իրագործվում էր գերազանցապես իսրայելական ինովացիաների, այլ ոչ նորագույն ամերիկյան ռազմական համակարգերի տրամադրման շնորհիվ: Ռազմարդյունաբերական հաջող կոոպերացիան կարող է օժանդակել տեխնոլոգիաների ավելի ազատ տեղափոխմանը ԱՄՆ-ից Իսրայել, որպեսզի ինչպես ԱՄՆ-ի, նույնպես և Իսրայելի համար մշակված համակարգերը լինեն ամենանորերը:

Իսրայելը ձգտում է զարգացնել նորագույն ռազմական տեխնոլոգիաներն այն նկատառումով, որպեսզի հասնի որակական տեխնոլոգիական գերակայության: Դա համապատասխանում է նաև ամերիկյան քաղաքականության նպատակներին: Միայն ԱՄՆ-ը կարող է ֆինանսավորել բարձր տեխնոլոգիաների բնագավառի իսրայելական գիտական հետազոտությունները, որպեսզի հետագայում կարողանա կազմակերպել իսրայելական համակարգերի արտադրությունն ԱՄՆ-ում:

Վերջապես, եթե տնտեսական անհրաժեշտությունը բերի նրան, որ Իսրայելը ստիպված լինի բացահայտել իր մշակումների որոշ տեխնոլոգիական գաղտնիքներ, որոնք որ ցանկալի կլիներ դեռևս գաղտնի պահել, ապա դրանց փոխանցումը մերձավոր դաշնակցին՝ ԱՄՆ-ին, երևի թե կլինի ամենա-

[21] Տես. *Israel – a Land of Tech Promise.* Այս առիթով նկատենք, որ այս տարվա նոյեմբերին Սիլիկոնային հովտում նախատեսվում է անցկացնել «Արմթեք կոնգրես 2009» գիտաժողովը: Մանրամասն տես. http://www.asbarez.com/arm/2009/06/02/59786

հարմար տարբերակը: Այդ պատճառով էլ երկու երկրների միջև կնքված են հատուկ երկկողմանի համաձայնագրեր, որոնք կարգավորում են ռազմական տեխնոլոգիաների տրանսֆերտները:

Այսպիսով, Իսրայելի օրինակը ցուցում է, թե ինչպես կարելի է սահմանափակ ռեսուրսներ ունենալու պարագայում, օգտագործելով գիտական համագործակցության ներուժը, հասնել նշանակալի նվաճումների տնտեսության բնագավառում: Այդ փորձը նաև հուշում է, թե որքան սերտորեն են կապված քաղաքականությունն ու գիտությունը, թե ինչ աստիճանի են դրանք փոխպայմանավորված միմյանցով:

**«ԳԼՈԲՈՒՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ամսագիր**
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 29.07.2009թ.
Թիվ 4 (8), 2009թ.
Տպաքանակը՝ 200։

Ֆորմատը՝ 70x100 1/16: Պայմանական 5 մամուլ։
Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում